ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

№ 8 (147) 18 ԱՊՐԻԼԻ 2000 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1998-Ի ՓԵՏՐՎԱՐԻՑ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Ժողովրդի ճակատագրի նկատմամբ խոր մտահոգությամբ

Մարտի 31-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում իր աշխատանքն սկսեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, վարչապետ Արամ Սարգսյանը, Հայաստանի Հանրապետության նախարարներ, գերատեսչությունների ղեկավարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ Սրբազանը, ակադեմիական համակարգի և գիտական այլ կենտրոնների ներկայացուցիչներ։

Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հաշվետու տարում կյանքից հեռացած նշանավոր գիտնականների հիշատակը։

Այնուհետև ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆԸ։

«ՀՀ ԳԱԱ 1999 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին» զեկուցեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը։

Զայնը տրվում է հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ Սրբազանին, որը ժողովի մասնակիցներին հաղորդեց Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի ողջույնը և ազգօգուտ ու արդասավոր աշխատանք մաղթեց ժողովի աշխատանքներին։

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ակադեմիկոսներ Լևոն Հախվերդյանը, Սիլվա Կապուտիկյանը (բանաստեղծուհու ելույթի տեքստը, որ կարդացվել էր կրճատումներով, ամբողջությամբ տպագրված է մեր թերթի այս համարում), Ծայիկո Բաղանյանը, Ցուրի Ալեքսանյանը, Գրիգոր Ավագյանը, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Ավետիսյանը, գիտությունների դոկտոր Սեներիկ Հայրապետյանը։

Ելույթ ունեցողների գլխավոր մտահոգությունը ակադեմիայի և նրա ինստիտուտների առջև ծառացած այն խնդիրներն էին, որոնք տարեցտարի դառնում են քննարկումների առարկա և որոնք, ցավոք սրտի, դեռևս սպասում են իրենց լուծմանը։

Նորից խոսվեց թեմատիկ ֆինանսավորման արատավոր բնույթի, գիտության աշխատողների սոցիալական ծայրահեղ ծանր վիճակի, գիտնականների արտահոսքի, երիտասարդ գիտաշխատողներով համակարգը համալրելու, գիտական ներուժի պահպանման, ինստիտուտների ու լաբորատորիաների նյութական բազայի անբավարարության, սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածության ու բազում ուրիշ հարցերի մասին, որոնք խանգարում են ակադեմիական համակարգի լիարժեք և արդյունավետ գործունեությանը։

Կրկին արձանագրվեց, որ անհետաձգելիորեն դանդաղում է Ազգային ժողովի կողմից «Գիտության մասին օրենքի» ընդունումը, որի բացակայությունը, մեղմ ասած, անհանդուրժելի է։

Ինչպես հաշվետվության մեջ, այնպես էլ ելույթներում (ակադեմիկոսներ Լևոն Հախվերդյան, Ծայիկո Բաղանյան, Ցուրի Ալեքսանյան) խնդրեն դատապարտվեց մի շարք խմբագրությունների կողմից մամուլի ազատությունը «յուրովի» ըմբռնելու, հասկանալու և իրականացնելու ձևն ու սկզբունքը։

Ստացվել է այնպես, որ մամուլի որոշ օրգաններ իրենց համար գլխավոր սկզբունք են դարձրել ընտրել ու տպագրել սկանդալային նյութեր, իմա՝ բամբասանք, զրպարտություն, հայհոյանք, ծաղրանք, անձ և արժանապատվություն վիրավորող հորինվածքներ, իրենց թերթերի տպաքանակի մեծացման և «կարդացվող»

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ՝ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները վկայում են, որ ակադեմիայի համակարգը, չնայած աշխատանքային շարունակվող ծանր պայմաններին, անհասկանալի, բայց մինչև այժմ գործող, այսպես կոչված, թեմատիկ ֆինանսավորման սուղ ծավալների շրջանակներում, հասել է դրական որոշ տեղաշարժերի՝ ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտական հետազոտությունների ասպարեզում։

Անհրաժեշտ եմ համարում նախ նշել ակադեմիայի գիտնականների ջանքերը, որոնք նպատակաուղղված են եղել պահպանելու մեր գիտական ներուժը, կոլեկտիվների ձեռքբերումները և դրանք ծառայեցնելու հանրապետության արդի պահանջների բավարարմանը։ Մասնավորապես, պետք է նշել ԳԱԱ-ի ինստիտուտների կողմից մշակված այն նոր տեխնոլոգիաները, որոնք հնարավորություններ կարող են ստեղծել համաշխարհային շուկայում արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների մրցունակ արտադրանք թողարկելու համար։ Դժբախտաբար, ինչպես դրանք, այնպես էլ արտադրության առավել ինտենսիվացմանն ուղղված մեր առաջարկները կյանքում դեռևս տեղ չեն գտել։

Մեր գիտնականներին հաճախ զարմանք է պատճառում, թե ինչու իրենց արժեքավոր մշակումները չեն հետաքրքրում մեր երկրի ղեկավար և գործարար շրջանակներին։ Չէ՞ որ դրանց ներդրումը կարող է զգալի եկամուտներ բերել հանրապետությանը, հենց իրենց և ապա նաև գիտությանը և գիտական աշխատողներին։ Սա շատ կարևոր խնդիր է և այստեղ մեծ աշխատանքներ ունենք կատարելու և՛ մենք՝ գիտության բնագավառի աշխատողներս, և՛ նրանք՝ գործարար աշխարհի ներկայացուցիչները և մեր կառավարությունը։ Այս բնագավառում աշխատանքների հստակ կազմակերպման պայմաններում, ես համոզված եմ, որ շատ առաջարկություններ կարճ ժամանակում կյանք կմտնեն և կտան շոշափելի արդյունք։

Որպեսզի լինեմ օբյեկտիվ, պետք է նշեմ, որ կառավարությունն արդեն ձեռնամուխ է եղել այդ գործին։ Հուսանք, որ այն կշարունակվի և կտա դրական մեծ արդյունք։

Էական են եղել նաև տարբեր երկրների, և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության, գիտական օջախների հետ կնքված պայմանագրերի շնորհիվ ստացված միջոցների և հնարավորությունների օգտագործումը, հովանավորների, հիմնադրամների ներդրումները։

Մեր գիտնականները հստակ պատկերացնում են, որ մեր այսօրվա վիճակը երկար տարիների ընթացքում ձեռք բերածի «մի կերպ» պահպանելն է և եթե չձեռնարկվեն կտրուկ միջոցներ՝ գիտության վերաբերյալ մոտեցումները լրջորեն քարեփոխելու ուղղությամբ, մենք կկորցնենք նախորդ տասնամյակներում ձեռք բերած գիտական ներուժը և կկանգնենք փակուղու առաջ։

ՀՀ ԳԱԱ-ն ստեղծված պայմանների հետևանքով չի կարողացել թե՛ հիմնարար և թե՛ կիրառական հետազոտությունների ասպարեզներում հասնել իր հնարավորությունների դրսևորմանը՝ աշխատանքները ժամանակակից պահանջների մակարդակին հասցնել և պահանջված չափով սատար կանգնել հանրապետության անվտանգությունն ապահովելուն, հանքահումքային, վառելիքա-էներգետիկ և այլ շատ բարդ հիմնահարցերի լուծմանը։

Պետք է ասել, որ գիտահետազոտական հիմնարկները ներկա պայմաններում աշխատում են իրենց հնարավորություններից ցածր մակարդակով։ Այստեղ կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ։

Հայաստանը խորհրդային հասարակարգից թեվակոխել է շուկայական հարաբերությունների և ժողովրդավարական գործընթացների զարգացման մի նոր շրջան, որի հետևանքով թե՛ տնտեսական ու սոցիալական, թե՛ պետական ու իրավական, թե՛ գաղափարախոսական ու աշխարհաքաղաքական և թե՛ այլ ոլորտներում ծագել են լուծումներ պահանջող հիմնախնդիրներ, որոնք գիտականորեն գրեթե հետազոտված չեն։ Արմատապես փոխվել են գիտությունների զարգացման պայմանները, նրա առաջնահերթ ուղղությունները։

Այս հարցերը հանգամանալից քննարկվել են գիտությունների ակադեմիայի բաժանմունքների նստաշրջաններում։ Անկասկած է, որ կյանքի հարուցած նոր խնդիրներից ելնելով, անհրաժեշտ է ՀՀ ԳԱԱ-ում իրականացնել կառուցվածքային լուրջ փոփոխություններ։

Մենք շատ հաճախ թերանում ենք հանրապետության կառավարության պաշտոնական խորհրդատուի մեր պարտականությունների կատարման մեջ։ Ամենից առաջ դա վերաբերում է գիտության, հանրապետության տնտեսության զարգացման առաջնային ուղղությունների ձևավորման գործընթացին։

Հայաստանի անկախության առաջին տարիներին ՀՀ ԳԱԱ-ի դժվարությունները պայմանավորված էին նախկին միութենական ակադեմիական հատվածից կտրվելով, կենտրոնացված պատվերների ընդհատումով և միջակադեմիական կապերի խզումով։ Գիտության բյուջեն խիստ կրճատվել էր, իսկ բազային ու ծրագրային ֆինանսավորումը՝ գործնականորեն ընդհատվել։ Ամենացավալին այն է, որ այս ամենը տեղի է ունեցել ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում, գիտական տեղեկատվության մեկուսացման, ենթակառուցվածքի՝ շենքերի, լաբորատոր բազայի, նյութատեխնիկական մատակարարման վթարային պայմաններում։ Ի վերջո, առկա էր գիտական ներուժի նվազման միտում, շնորհալի գիտնականների արտահոսք, տաղանդավոր երիտասարդներին գիտության բնագավառի մեջ ընդգրկելու դժվարություններ, գիտական դպրոցների «ծերացում» և այստեղից բխող այլ հետևանքներ։

Անվիճելի է, որ սահմանափակ ֆինանսական միջոցների պայմաններում գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունը պետք է լինի գիտատեխնիկական հետազոտությունների առաջնային բնագավառների որոշումը։ Դրա հիման վրա անհրաժեշտ է մշակել գիտատեխնիկական համալիր նպատակային ծրագրեր՝ որպես տնտեսության առաջնային և հեռանկարային խնդիրների լուծման նախընտրելի պայման։

Սակայն դեռևս մշակված և հաստատված չեն հանրապետության տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները (որոնց մշակմանը պետք է մասնակցի նաև ԳԱԱ-ն)։ Առանց դրանց, անկասկած, դժվար է ճշգրիտ որոշել գիտության զարգացման առաջնային ուղղությունները։ Այդ ուղղությունների թվաքանակը պետք է լինի սահմանափակ, նրանց իրականացումը կարող է պահանջել կազմակերպական լուրջ փոփոխություններ, բայց մենք դրան պետք է գնանք, գուցե և այս պայմաններում ազատվելով գիտական որոշ ոչ առաջնային ճյուղերից։

ՀՀ ԳԱԱ-ն 2000 թ. մեկ անգամ ևս ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել իր առաջարկությունները՝ պետական նշանակություն ունեցող գիտական ուղղությունների գերակայության՝ վերաբերյալ։ Նշված են նաև առաջարկություններ գիտության և արտադրության կապերի զարգացման, նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված հարցերը։ Ըստ մեզ, պետք է ստեղծվեն նոր համատեղ գիտա-արտադրական կազմակերպություններ։ Քլորոպրենային կաուչուկի, պոլիամիդի, քիմիական պարարտանյութերի արտադրության, գյուղատնտեսական մթերքներով հանրապետության ապահովման հարցերը և բազմաթիվ նման հարցեր հրամայական պահանջում են ակադեմիայի գիտական միջամտումը, համապատասխան տեխնոլոգիաների գիտական մշակումը։ Դրան պետք է ծառայեցնել ակադեմիայի գիտական ներուժը և հիմքեր ստեղծել իշխանությունների առավելագույն ճիշտ որոշումների համար։

ՀՀ ԳԱԱ գիտնականները հստակ գիտակցում են, որ հանրապետությունը հնարավորություն չունի շարունակելու գիտական աշխատանքների ֆինանսավորումն այն ծավալներով, որոնք եղել են նախկինում։ Ուստի, ելնելով ստեղծված պայմաններից, հանրապետությունում առկա գիտական ներուժը ռացիոնալ օգտագործելու համար անհրաժեշտ է գնալ լրջորեն մտածված և ծրագրված փոփոխություններին։ Այդ փոփոխությունների շարքին է դասվում նաև գիտության ֆինանսավորման գործող համակարգի արմատական բարեփոխումը։ Այդ մասին շատ լուրջ ելույթներ եղան մեր բաժանմունքների ժողովներում։

● Առաջին հերթին անհրաժեշտ է բյուջետային քաղաքականության շրջանակներում հրաժարվել գիտության ֆինանսավորման մնացորդային սկզբունքից։

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Գիտության զարգացմանը՝ պետական հոգատարություն

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ–ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

Հաշվետու տարին՝ 1999 թվականը, Հայաստանի Հանրապետության համար թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ հասարակական-քաղաքական առումներով եղել է դժվարին, ցնցումներով լի տարի։ Ստեղծված պայմաններում ԳԱԱ-ն իր գործունեությունը ծավալել է երկու հիմնական ուղղությամբ՝ կատարել նախատեսված գիտահետազոտական աշխատանքները, լուծել մյուս հրատապ խնդիրները և հնարավորինս պահպանել գիտական ներուժը։

Հաշվետու տարում գիտական հետազոտություններ են կատարվել 496 թեմայով։ ԳԱԱ գիտնականներն ստացել են 24 արտոնագիր, հրատարակել մոտ 100 աշխատություն, 1190 գիտական հոդված, որի մեծագույն մասը՝ 837-ը՝ արտասահմանում։ Սկսել է գործել Գյուլբենկյան հիմնադրամի նվիրած ժամանակակից տպարանը, որի շնորհիվ ընդլայնվել է արտադրանքի ծավալը և բարելավվել որակը։

Համառոտ կանգ առնելով հաշվետու տարում բաժանմունքների հիմնական գիտական արդյունքներին, զեկուցողը այնուհետև շարունակեց.

ՀՀ ԳԱԱ նախագահությանը մշտապես զբաղեցրել է գիտության ապագայի համար բախտորոշ նշանակություն ունեցող հուսալի փոխարինող ունենալու խնդիրը։ Հաշվետու տարում որոշ հաջողություններ կան այս ասպարեզում։ Հրատարակվել է բնական գիտությունների բաժանմունքի երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածուն։ Մյուս երկու բաժանմունքների գծով ժողովածուները նախապատրաստվում են հրատարակության։ Հանձնարարվել է գիտական ամսագրերի խմբագրություններին՝ բացել «Երիտասարդ գիտաշխատողի ամբիոն» խորագրով հատուկ բաժին և այնտեղ տպագրել միայն երիտասարդների աշխատանքները։ Ինստիտուտներում, հատկապես հումանիտար գիտությունների բաժանմունքի՝ կազմակերպվել է ասպիրանտների և երիտասարդ գիտնականների գիտաժողովներ։ Երիտասարդ գիտաշխատողների խորհրդին հատկացվել է առանձին աշխատատեղ, որը մշակույթի նախարարության միջոցով ապահովվել է համակարգչով։ Աշխատանքներ են տարվում նրանց համար հատուկ ֆոնդ ստեղծելու ուղղությամբ և այլն։

Այսուհանդերձ արվածը բավարար չէ։ Հասկանալի է, երիտասարդ մասնագետների համար աշխատանքային լավ պայմաններ ստեղծելը կապված է ֆինանսական միջոցների հետ, որը բացակայում է։ Սակայն բնական հարց է առաջանում. արդյո՞ք ստեղծված թեկուզև դժվարին պայմաններում մենք օգտագործո՞ւմ ենք եղած բոլոր հնարավորությունները։ Միանշանակ կարող ենք ասել, որ ոչ։ Ինստիտուտների մի զգալի մասում կամ անտեսվում է երիտասարդ մասնագետների պատրաստման խնդիրը, կամ լավագույն դեպքում, բավարարվում են միայն մեկ գիտաժողով հրավիրելով։ Փորձը ցույց է տալիս, որ այն հաստատությունները, որտեղ տնօրինությունը շահագրգիռ հետաքրքրություն է ցուցաբերում՝ այնտեղ արդյունքները գոհացուցիչ են լինում, ինչպես ասենք մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտում։ Մի՞թե անտարբերության լավագույն վկայություն չէ այն խոսքը, որ ԳԱԱ համակարգում գործող 10 մասնագիտացված պրոբլեմային խորհուրդներից և ոչ մեկը չի անդրադարձել ասպիրանտների պատրաստման կամ երիտասարդ գիտաշխատողների մասնագիտական աճի հարցերին։

Չնայած այն հանգամանքին, որ նախորդ մի քանի տարիների ժողովներում խոսվել է, սակայն քանի որ որևէ տեղաշարժ չի կատարվել, կրկին հիշեցնում ենք, որ գիտության զարգացման հեռանկարների առումով երիտասարդ մասնագետների պատրաստումը պետական նշանակություն ունեցող այնպիսի առաջնային խնդիր է, որն արժանի է դառնալու հանրապետության կառավարության հատուկ քննարկման նյութ։

Մինչև վերջերս ԳԱԱ հիմնակազմ գրադարանը հագեցված չէր նորագույն տեխնիկայով և գործում էր փաստորեն տնայնագործական եղանակով։ Հաշվետու տարում արմատապես բարելավվել է գրադարանամատենագիտական և գիտա-տեղեկատվական սպասարկումը։ ԻՆՏԱՍ-ի դրամաշնորհով Ինտերնետի միջոցով կազմակերպվել է համակարգի ինստիտուտների համար արտասահմանյան նորագույն գիտական հոդվածների որոնման և ստացման ծառայությունը։ Սորոսի ֆոնդի բաց հասարակության ինստիտուտի դրամաշնորհով գրադարանը ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ իրականացրել է գրադարանային որոշակի աշխատանքների ավտոմատացումը։ Գրադարանում ստեղծվել է համակարգչային ցանց և ԳԱԱ հրատարակությունների տվյալների էլեկտրոնային շտեմարան։ Ընթերցողներին ի սպաս է դրվել 2 համակարգչային շտեմարան, որոնք սպասարկվում են վերաբացված հատուկ ընթերցասրահում։ Ստեղծվել է ավտոմատացման և էլեկտրոնային սպասարկման բաժին։

Բնական հարց կարող է առաջանալ, թե ներակադեմիական խնդիրներից բացի, գիտությունների ազգային ակադեմիան մեր ժողովրդին՝ ստեղծված աղետալի իրավիճակից դուրս բերելու գործում ինչ քայլեր է կատարում։

Ահա այս դիտակետից մոտենալու պարագայում սրդարությունը պահանջում է նշել, որ ազգային ակադեմիան որոշ հարցերում թերանում է։ Հիշատակենք միայն մեկ բնագավառ։

Խորհրդային տարիներին սահմանված խիստ գրաքննության պայմաններում աշխատությունները հրատարակվում էին միայն կուսակցական բարձրագույն ատյանների հավանությունը ստանալուց հետո։ Քանի որ չկար մամուլի ազատության դրանց արժեքավորումը՝ գնահատումը ևս կատարվում էր, փաստորեն, նույն եղանակով։ Հասկանալի է, որ նման մոտեցումը կաշկանդում, խոչընդոտում էր մտքի ազատությունը։

Անկախություն ձեռք բերելուց հետո ընկանք հակառակ ծայրահեղության մեջ։ Ստեղծված ազատությունից հախտուն կերպով օգտվելով, կարճ ժամանակում գրաշուկան լցվեց տարատեսակ գրականությամբ, հաճախ գիտական ու գեղարվեստական ցածրորակ մակարդակով, մարդու մտքին ու հոգուն սնունդ չտվող գրքերով ու գրքույկներով։ Գրում ու առատորեն տպագրում են ոչ միայն մասնագետները, այլ նաև հովանավորներ գտնող կամ միջոցներ ունեցող սիրողները, դիլետանտները։ Այդ նույն եղանակով էլ կատարվում է արժեքավորումը, գրախոսությունների միջոցով դրանց տրվող գնահատականները։

Ձկա այդ գործընթացը կարգավորող որևէ մեխանիզմ։ Հարց է առաջանում, մի՞թե ազգային ակադեմիայի ինստիտուտները չեն կոչված հեղինակավոր ու հիմնավոր խոսք ասելու հրատարակվող գրականության վերաբերյալ։ Մենք չպետք է մոռանանք, որ առաջին հերթին ազգային ակադեմիան է կոչված գիտական-ստեղծագործական առումով ուղղություն տալու հանրապետության գիտամշակութային կյանքին։

ԳԱԱ հասցեին հնչում են հանդիմանություններ, թե ինչու ակտիվություն հանդես չի բերում և իր ներդրումը կատարում հանրապետությունը ճգնաժամից դուրս բերելու ուղիներ մշակելու գործում։ Պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը ներկայացրեց թե արտադրության տարբեր ճյուղերի գծով ԳԱԱ-ն վերջին տարիներին որքան առաջարկներ է ներկայացրել կառավարությանը, որոնք պատշաճ ուշադրության չեն արժանացել։

Ուղղակի կարելի է ասել, որ թույլ է պետական բարձրագույն մարմինների և ԳԱԱ միջև գործարար, սերտ համագործակցությունը։ Դրա պատճառներից մեկն այն է, որ կառավարության կազմում չկա գիտության ոլորտը համակարգող օղակ կամ անմիջական պատասխանատվություն կրող հատուկ բարձրաստիճան պաշտոնյա։

Անհասկանալի է, թե ինչու չի օգտագործվում խորհրդային կարգերի լավագույն փորձը, երբ վարչապետը ուներ տեղակալներ, որոնցից մեկը զբաղվում էր միայն գիտության, կրթության ու մշակույթի հարցերով։ Գործին մոտ կանգնած լիազորություններով փոխվարչապետը կարող է համակարգել իրարից մեկուսի գործող հանրապետության ողջ գիտամշակութային կյանքը և իրականացնել երկրի կյանքին վերաբերող ընդգրկուն ծրագրեր։ Միանգամայն արդարացված կլիներ, եթե հանրապետության Սահմանադրության մեջ կատարվելիք փոփոխությունների ժամանակ նկատի առնվեր նաև այս խնդիրը։

Համառոտ զեկուցման մեջ հնարավոր չէ անդրադառնալ բոլոր հարցերին։ Հուսով ենք, որ այդ բացը կլրացնեն ընդհանուր ժողովի մասնակիցները և սկզբունքային խոսակցություն կբացեն ինչպես ԳԱԱ գործունեության, այնպես էլ հանրապետությունում գիտության առաջ ծառացած հիմնախնդիրների շուրջ։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ՝ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

● 1992 թվականից ի վեր գիտական հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման հիմնական ձևը լրջորեն չմտածված թեմատիկ ֆինանսավորումն է: Երկար տարիների փորձը հաստատորեն ցույց է տվել, որ այն կարիք ունի լուրջ կատարելագործման: Ֆինանսավորման այդ ձևը չի կարող լինել բյուջեից հատկացկման միակ եղանակը, որովհետև նրա միջոցով, ըստ էության, չեն լուծվում գիտական կարևորագույն ծրագրերի ֆինանսավորման, ինստիտուտներում կատարվող գիտական աշխատանքների կենսապահովման հարցերը: Գիտահետազոտական ինստիտուտները զրկվել են իրենց հիմնական կոորդինացիոն և կազմակերպական ֆունկցիաներն իրականացնելու, նոր որոնողական ծրագրեր և համապատասխան ձեռնարկումներ կատարելու հնարավորությունից: Անհրաժեշտ է սահմանել հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման նվազագույն չափը հանրապետության բյուջեից և այդ չափի սահմաններում բազային հատկացումների տոկոսը: Եթե մենք չբարձրացնենք ինստիտուտների, ինչպես նաև բաժանմունքների դերը գիտության ֆինանսավորման, կատարված աշխատանքների արդյունքների գնահատման և նոր խնդիրների ձևավորման ասպարեզում՝ մենք կհանգենք գիտության նկատմամբ չարչիական վերաբերմունքի դիրքերի վրա և կկորցնենք գիտական դպրոցների կազմակերպման փորձված ձևերը և ի վերջո՝ այն բոլորը, ինչ մեր ազգը ձեռք է բերել դարերի ընթացքում: Մի՞թե պարզ չէ, որ այժմ այն ժամանակները չեն, երբ անհատ կամ մի խումբ գիտնականներ առանց գիտական համապատասխան կոլեկտիվների աշխատանքի, կարող են բարձրացնել գիտության զարգացման ծանր բեռը:

● Ինստիտուտների հաստատուն բազային ֆինանսավորումը պետք է ապահովի ինչպես հիմնարար հետազոտությունները, տեսական մշակումները, այնպես էլ նպատակային անհրաժեշտ ծախսերը (լաբորատոր և փորձարարական բազաների, գրադարանների, հազվագյուտ սարքերի պահպանում, նոր բազաների ստեղծում, գիտական աշխատանքների հրատարակում և այլն): Վերջին հաշվով բազային ֆինանսավորումը պետք է կատարել լրացուցիչ գիտական ճյուղի համար առանձին ընտ նրա առանձնահատկությունների: Ճիշտ կլիներ, որ դա կազմեր ԳԱԱ ֆինանսավորման առնվազն 25 տոկոսը և տարեցտարի աճով հասներ մինչև 75 տոկոսի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդեն իրենց գիտական բարձր որակը ապացուցած ուղղությունները կարող են հետագա զարգացումը այնանալ մ այն հիմնականում բազային ֆինանսավորման պայմաններում: Դժբախտաբար այս բոլորը հրողությունն մնացին մեր հրազում, որովհետև 2000 թ. բյուջեն նույնպես կազմված է առանց այս հիմնախնդիրը հաշվի առնելու և այժմ մեր հույսը մնացել է գիտության մասին օրենքի ընդունման վրա:

Կարևորագույն խնդիր է՝ ՀՀ գիտական ներուժն առաջին հերթին ուղղել հանրապետության նախապատվեալի խնդիրների լուծմանը: Աշխատանքները պետք է կազմակերպել, կոորդինացնելով հանրապետության տվյալ մասնագիտության գիտնականների ջանքերը, անկախ նրանց ձևական գերատեսչական պատկանելիությունից: Մեր կարծիքով, ֆինանսավորման մինչև 25 տոկոսը կառավարության կողմից պետք է պետական պատվերի (գրանտների) ձևով հատկացվի հենց այս գիտատեխնիկական ծրագրերի իրականացմանը: Ամեն դեպքում կազմակերպական իմաստով անհրաժեշտ է նշված ուղղությունների զարգացման համար գրանտների գումարները հատկացնել անմիջականորեն կատարող գերատեսչություններին և նրանք կրեն պատասխանատվություն՝ աշխատանքների կարևորության, կազմակերպման և արդյունքների համար:

Այսպիսով, կարող ենք ունենալ բյուջեից բազմատեսակ ֆինանսավորման համակարգ, որը հնարավորություն կտա պատշաճ կերպով ընդունել գիտության պահպանմանը և զարգացմանը:

Ի վերջո, որպեսզի գիտությունը Հայաստանում դառնա գերակայող բնագավառ, անհրաժեշտ է պետական բյուջեից գիտությանը տրամադրվող ծախսային մասի 1,3 տոկոսը մոտ տարիներին հասցնել մինչև 3—4 տոկոսի:

Բնական կլիներ նաև գիտության ֆինանսավորումը ըստ ուղղությունների և թեմաների նախատեսել տվյալ տարվա սկզբից, այլ կերպ անհասկանալի և արհեստական է դառնում տարեկան բյուջեի իմաստը: Այս բոլորը նախատեսված է «Գիտության և գիտատեխնիկական քաղաքականության մասին» օրենքի նախագծի մեջ, որը, մենք հույս ունենք, որ շուտով կընդունվի:

Գիտության կազմակերպման արմատական վերակառուցումը պետք է ընթանա մի կողմից գիտական հաստատությունների կառավարման և ենթակառուցվածքների կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական ուղղությունների ճշգրտման և դրան համապատասխան գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման ուղղությամբ:

Գիտատեխնիկական արտադրանքի պահանջարկի նվազումը հանրապետությունում տանում է դեպի գիտության ծավալների կրճատմանը և գիտական մտքի արտահոսքին: Միևնույն ժամանակ, անընդունելի է այն կարծիքը, որ եթե մեր հանրապետությունը փոքր է՝ համապատասխանորեն պետք է կրճատվեն գիտության ծավալները:

Հանրապետությունում ստեղծվել է գիտական մեծ ներուժ՝ գիտական դպրոցներ, ուղղություններ, որոնք ունեն միջազգային ճանաչում: Հետևաբար, անհրաժեշտ է նոր մոտեցում ցուցաբերել ԳԱԱ-ի միջազգային գիտական կապերի նկատմամբ:

Անկասկած, ՀՀ ԳԱԱ գործունեությունը հաշվետու տարում իրականացվում էր հանրապետության տնտեսության խորը ճգնաժամի պայմաններում: Խորհրդարանական նոր ընտրություններին հետևած որոշ դրական միտումներն ընդհատվեցին հոկտեմբերյան ողբերգական դեպքերով: Փաստորեն, ակադեմիական համակարգը գործել է երկրի չափազանց անկայուն իրավիճակի պայմաններում, որը, բնական է, բացասական է ազդել գիտության զարգացման վրա: Անցումային պահը մեր երկրի համար ուղեկցվում է օբյեկտիվ դժվարություններով, հանգեցնելով բյուջեի սղությանը, մասնագետների արտահոսքին: Միևնույն ժամանակ չի կարելի չհավատալ գրեթե անտարբեր վերաբերմունքը գիտության նկատմամբ: Բազմիցս գիտության գծով մշակված պետական քաղաքականությանը վերաբերող առաջարկներն անտեսվել են: Գիտական կազմակերպությունների հոգսերի նկատմամբ դրսևորվում են բյուրոկրատական մոտեցումներ, ամիսներ շարունակ չեն վճարվում աշխատավարձերը, փորձեր են արվում «օպտիմացնել» գիտությունը: Այս ամենը խորացնում է այն վիճը, որն այսօր առաջացել է մի կողմից գիտության բնագավառում պետական քաղաքականության և մյուս կողմից հասարակության կյանքի առաջընթացում գիտության առաջնային դերի միջև: Անուշադրությամբ մատնելով հանրապետության վարչապետին առընթեր գիտության և գիտատեխնիկական քաղաքականության արդեն կազմավորված հույժ անհրաժեշտ խորհրդի գոյությունը, վերջին շրջանում պարբերաբար ընտրեղծվում են գիտության կազմակերպման և բարեփոխումների հարցերով զբաղվող նորանոր անհարկի խորհուրդներ և հանձնաժողովներ, որոնց ձևավորման սկզբունքները և հարցադրումներն իրենց մակարդակով շատ հեռու են գիտության շահերին ծառայելուց: Այս բոլորը արդյունք է նրան, որ մեզ մոտ գրանցվում է ցանկացած այսպես կոչված «գիտական» կազմակերպություն:

Գիտենք, որ օրենքը թույլ է տալիս, բայց որքա՞ն և մինչև ե՞րբ:

Ինչքա՞ն կարելի է անուշադրության մատնել այն պարզ ճշմարտությունը, որ գիտությանն առավել մոտ է կանգնած հենց գիտնականը, և գիտնականը պետք է տա իր առաջարկությունը, կարծիքը: Ես, իհարկե, խոսում եմ իսկական գիտնականի մասին:

Գիտությունը, որպես հոգևոր և մտավոր գործունեության մասնագիտացված ոլորտ, ներկա ծանր պայմաններում առավել ևս կարոտ է պետական պաշտպանվածության և հովանավորման: Միևնույն ժամանակ այն հանախ դառնում է թիրախ՝ դեռևս զգալի նյութական արժեքներ պահպանած գիտության համակարգից անձնական ակնկալիքներ սպասող և դրա նկատմամբ սպառողական վերաբերմունք դրսևորող առանձին «չինովնիկների» համար:

Այդուհանդերձ, միջազգային գիտական ամենաբարձր շրջանակներում մեծ դրվատանքի են արժանանում մեր ակադեմիայի, ինչպես արդեն ճանաչված, այնպես էլ երիտասարդ բազմաթիվ գիտնականների աշխատանքները:

Հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ-ի համակարգի բազմաթիվ մասնագետներ փորձագիտական առաքելությամբ մասնակցել են տարբեր միջազգային գիտական կազմակերպությունների աշխատանքներին: Իր հերթին ԳԱԱ-ում բարձր մակարդակով անց են կացվել մի շարք միջազգային գիտաժողովներ:

Ո՞ւմ համար պարզ չէ, որ ցանկացած քիչ թե շատ քաղաքակիրթ երկրի տնտեսական և հոգևոր առաջադիմության հիմնական պայմաններից մեկը զարգացած գիտության համակարգի, առավել ևս հիմնարար գիտության ներուժի առկայությունն է:

Հիմնարար գիտությունն է այն կարևոր լծակը, որը պետք է ուղենիշ հանդիսանա և թափ հաղորդի կիրառական հետազոտություններին և վերջիններիս միջոցով տնտեսությունը հարստացնի մրցունակ ժամանակակից մշակումներով և տեխնոլոգիաներով:

ՀՀ իշխանությունները, թեկուզ և ուշացումով, պետք է կարողանան, հաշվի առնելով մեր երկրի զարգացման հեռանկարները, պատշաճ նշանակություն տան գիտությանը: Ավելորդ չէ հիշել Ժոլիո-Կյուրիի խոսքերը. «Գիտությունն անհրաժեշտ է ժողովրդին: Այն երկիրը, որ չի զարգացնում գիտությունը, անխուսափելիորեն փոխակերպվում է գաղութի»:

Հանրապետության տնտեսական խոր և երկարատև ճգնաժամի հետևանքով գիտությունն ենթակառուցվածքը ենթարկվել է մեծ փոփոխությունների: Գիտահետազոտական աշխատանքների կատարման ծանրությունն կենտրոնը համարյա ամբողջությամբ տեղափոխվել է ՀՀ ԳԱԱ և բուհեր: Սակայն ոչ ակադեմիական համակարգում կատարվում են թեմաների 60 տոկոսը՝ մասնագետների 50 տոկոսի միջոցով, այսինքն տեղի է ունենում թեմաների մանրացում և չհիմնավորված ֆինանսավորում:

Այժմ ՀՀ ԳԱԱ-ի համակարգում կենտրոնացված է հանրապետության ողջ գիտական ներուժի և կատարվող աշխատանքների կեսը: Կարծես թե սա պետք է բերեր ՀՀ ԳԱԱ-ի դերի բարձրացմանը: Իրականում պատկերը բոլորովին այլ է: Գիտաշխատողների միջին աշխատավարձը չի անցնում 10 հազար դրամից, արդեն մոտ 10 տարի է, փաստորեն, չի նորացվում գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազան՝ պետության բյուջետային պարտավորությունները չեն կատարվում: Չեմ կարող չնշել, որ ԳԱԱ նախագահության խնդրանքով ՀՀ կառավարությունը բյուջեի սուղ միջոցներից 1999 թ. հատկացրել է որոշ ֆինանսավորում հիմնակազմ գրադարանի և մի շարք ինստիտուտների ամենահրատապ վերանորոգումները կատարելու համար և նախատեսել է միջոցներ՝ 2000 թվականի համար: Սակայն այդ բոլորովին բավարար չէ և թույլ չի տալիս լուծել աշխատողների ինչպես աշխատանքային պայմանների բարելավման, այնպես էլ սոցիալական հարցերը:

Պետք է նշել, որ չնայած հիմնական պետական բյուջետային ներդրումները թեմատիկ ֆինանսավորման միջոցով արվում են հիմնարար բնույթի հետազոտությունների բնագավառում, դա չի նշանակում, որ ՀՀ ԳԱԱ-ի ինստիտուտները չեն իրականացնում կիրառական բնույթի աշխատանքներ: Հաշվետվության մեջ բերված են համապատասխան տվյալներ: Դրանք հիմնականում իրականացվում են շնորհիվ միջազգային գրանտների և տեղական պատվերի: Այսինքն, տեղաշարժ է կատարվում կիրառական գիտության մեջ դեպի արտասահմանյան պատվերներ: Հաշվի առնելով արդյունաբերության ծանր վիճակը, ՀՀ ԳԱԱ-ն հետևողական քաղաքականությունը է իրականացնում կիրառական աշխատանքների բնագավառում, հասկանալով, որ մեր երկրի տնտեսության համար կարևոր է ունենալ կայուն զարգացման հիմքեր և տեխնոլոգիական առաջադիմություն: Վերջինս պահանջում է ամուր գիտական հիմք և պետական արտոնյալ պայմաններ: Ակադեմիան կառավարությանը առաջարկներ էր ներկայացրել տնտեսության տարբեր ոլորտներում ակադեմիական ինստիտուտների հետ համատեղ ձեռնարկությունների, կենտրոնների ստեղծման վերաբերյալ: Սակայն այդ առաջարկները մինչ այսօր չեն քննարկվել:

ԳԱԱ-ն հույս ունի, որ թե այս, թե մյուս առաջարկությունները, որոնք վերաբերում են հանրապետության տնտեսությունը ծանր վիճակից դուրս բերելու խնդիրներին, կդառնան լուրջ քննարկման առարկա:

Մեծ դժվարության հետ է կապված ՀՀ ԳԱԱ գիտական համակարգը երիտասարդ մասնագետներով համալրելու խնդիրը: Հայտնի է, որ դեպի գիտություն երիտասարդ մասնագետների ներգրավման հիմնական ճանապարհը ասպիրանտուրան է:

Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ-ն որոշ միջոցառումներ է ձեռնարկել այդ կարևոր հիմնախնդիրը քիչ թե շատ կարգավորելու համար: Բայց մենք գիտենք, որ դա շատ ծանր և բարդ հարց է և դեռևս պետք է մեծ ջանքեր ներդնել, որպեսզի ստեղծվեն բարենպաստ պայմաններ երիտասարդ գիտնականների մշտական ներհոսք ապահովելու համար:

Հայտնի է, որ 1999 թ. պետական պատվերով հանրապետությունում հատկացվել է 344 ասպիրանտական տեղ, որից ՀՀ ԳԱԱ-ի համակարգին տրամադրվել է ընդամենը 55, այսինքն մոտ 16 տոկոսը, և սա այն դեպքում, երբ ՀՀ ԳԱԱ-ում, ինչպես նշվեց, կուտակված է հանրապետության գիտական ներուժի և կատարվող աշխատանքների կեսը:

Ստեղծված ծանր պայմաններում որպես գոյատևման կարևոր միջոց է հանդիսացել մեր մասնակցությունը միջազգային ծրագրերի մրցույթներին: Դեռևս դժվարությամբ պահպանվող, մեր գիտական ներուժի մասնագիտական արժանիքների մասին է խոսում այն փաստը, որ ֆինանսավորման չափերի տեսակետից և առավել նշանակալի գրանտների թվով մեր հանրապետության գիտնականները նախկին խորհրդային հանրապետությունների շարքում զիջում են միայն Ռուսաստանի Դաշնությանը:

ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի զարգացման վերջին տարիների հիմնական խնդիրն ակադեմիայի ներառումն է համաշխարհային գիտական հանրությունում, պահպանելով ինքնուրույնությունը, գիտական ներուժի ամբողջականությունը և այդ ներուժը Հայաստանի Հանրապետության արտադրական, սոցիալ-տնտեսական, մշակութային շահերին ծառայեցնելու գերակայությունը:

Չնայած օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններին, վերջին տարիներին այդ կապերի օգնությամբ ԳԱԱ-ին հիմնականում հաջողվել է պահպանել գիտական ներուժը, որոշ չափով վերականգնել սառեցված կապերը և ստեղծել նոր կապեր արտասահմանյան գիտական կենտրոնների հետ և, ընդհանուր առմամբ, ինտեգրացվել միջազգային գիտական հանրությանը:

Հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք երկրների ակադեմիաների ներկայացուցիչների հետ և քննարկվել են երկկողմ համագործակցությունն հաստատելու կամ եղած կապերի հետագա ընդլայնման հնարավորությունները: Մասնավորապես, խոստումնալից է համագործակցությունը Հնդկաստանի, Չինաստանի, Ռումինիայի, Իսրայելի գիտությունների ակադեմիաների հետ:

Հատուկ ուշադրության կենտրոնում են եղել միջազգային և դոնոր կազմակերպությունների հովանավորչական աջակցության խնդիրները, դրանց կողմից առաջարկվող գիտահետազոտական ծրագրերում ակտիվ մասնակցության և դրամաշնորհների ստացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

ՀՀ ԳԱԱ-ն միշտ հատուկ առաջնություն է տվել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցությանը, որը մշտապես ծավալվում է 1994 թ. կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում:

Հաջողությամբ շարունակվում է համագործակցությունը Մեծ Բրիտանիայի թագավորական ընկերության հետ 1995 թ. կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում: Վերջին տարիներին գիտական համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Հունգարիայի, Իսրայելի գիտությունների ակադեմիաների, ԱՄՆ-ի, Իտալիայի, Իրանի գիտական հաստատությունների ու համալսարանների հետ:

ԳԱԱ-ն ջանքեր է գործադրել նաև տարբեր հիմնադրամների և սփյուռքի կազմակերպությունների հետ կապերի զարգացման ուղղությամբ: Հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտական հիմնարկներում հետազոտություններ են տարվել ԻՆՏԱՍ-ից, միջազգային գիտատեխնիկական կենտրոնից, քաղաքացիական հետազոտությունների հիմնադրամից, ՆԱՏՕ-ի և այլ գիտական ծրագրերից ստացված ավելի քան 40 դրամաշնորհների շրջանակներում: Անհրաժեշտ է նշել Գալուստ Գյուլբենկյանի հիմնադրամի կողմից ԳԱԱ-ին ցուցաբերվող նպատակային օժանդակությունը և աջակցությունը: Հիմնադրամի միջոցով հաջողվել է ամբողջովին վերազինել և արդիականացնել ԳԱԱ տպարանը և հրատարակչական բազան: Գյուլբենկյան հիմնադրամի օժանդակությամբ հրատարակվել են ԳԱԱ գիտական պարբերականները և մեծ արժեք ունեցող այլ գրականություն: Ստեղծվել և ընդլայնվում է ԳԱԱ-ն Հայաստանի այլ գիտակրթական հիմնարկների հետ կապող և Ինտերնետի ցանց մուտքն ապահովող համակարգը: Ստացվել են ժամանակակից չափանիշներին համապատասխանող որոշ գիտափորձնական և հետազոտական աշխատանքներն ապահովող սարքավորումներ: Դրամաշնորհներ են տրամադրվել երիտասարդ տաղանդավոր և վաստակաշատ գիտնականներին: Անգնահատելի է հիմնադրամի հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի և հոգաբարձու Միքայել Եսայանի հայրենանպաստ մեծ աշխատանքը:

Շատ մեծ է նաև Հայկական ընդհանուր բարեգործական միության նախագահ Լուիզ Սիմոն Մանուկյանի կողմից ցուցաբերած օգնությունը կոմպյուտերային ցանցի կազմակերպման և ուսումնական դասարանների ստեղծման ասպարեզում: Չի կարելի չնշել նաև հայ բարերարների և տարբեր կազմակերպությունների կողմից ցուցաբերվող օժանդակությունները:

Սակայն այս ամենը չի կարող ապահովել գիտական ներուժի համապարփակ օգտագործումը հանրապետության կարևորագույն խնդիրների լուծման գործում: Անհրաժեշտ է հիմնովին փոխել պետական քաղաքականությունը գիտության նկատմամբ:

Չափազանց կարևոր է ամենակարճ ժամանակում վերջապես ավարտել «Գիտության և գիտատեխնիկական քաղաքականության մասին» օրենքի քննարկումը, որը ձգձգվում է շատ տարիներ: Այս օրենքը հնարավորություն կտա լուծել ԳԱԱ-ին և մեր ինստիտուտներին ու ձեռնարկություններին հուզող շատ սկզբունքային հարցեր: Կարծում եմ, որ օրենքը մայիսին կքննարկվի Ազգային ժողով և մոտակա ամիսներին կընդունվի այն տեսքով, որը հավանության է արժանացել մեր ընդհանուր ժողովի կողմից: Միևնույն ժամանակ, մեզ հաջողվեց կառավարության հաստատմանը ներկայացնել մեր օրենսդրության նախագիծը, որի բովանդակությունը մենք զեկուցել ենք նախորդ ժողովում:

Չնայած ամբողջ ասածին, մենք պարտավոր ենք շարունակել մեր պարտականությունների իրականացումը և պետք է կառավարությանը կրկին և կրկին ներկայացնենք մեր առաջարկությունները՝ ստեղծված վիճակից դուրս գալու համար: Պետք է հասնել այն բանին, որ իշխանությունները հաշվի նստեն գիտության հետ, ոչ թե այն պատճառով, որ կարող են հաշվի նստել, այլ այն պատճառով, որ չեն կարող հաշվի չնստել:

Ակնհայտ է, որ գիտություն-արտադրություն կապը միշտ չէ, որ անմիջական է և ուղղակի, առավել ևս՝ անցումային շրջաններում: Սակայն ոչ մի երկիր չի կարող ունենալ լուրջ գիտական ներուժ, առանց զարգացած տնտեսության: Որքան էլ մենք այլընտրանքային աղբյուրներ հայթայթենք, միևնույն է գիտության հիմնական ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից: Իսկ բյուջեի հիմքը՝ զարգացած արտադրությունն է: Միևնույն ժամանակ մրցունակ արտադրությունների ձևավորումն առանց լուրջ գիտության, դժվար է պատկերացնել:

Պատմական առումով վայրկյաններ են մնացել, որպեսզի մենք թևակոխենք երրորդ հազարամյակը, և մարդկությունը գնում է դեպի նոր դարաշրջան՝ գիտության և տեխնոլոգիաների բնագավառում ձեռք բերած խոշորագույն նվաճումներով և, իհարկե, նաև նոր հույսերով:

Գիտությունը չի կարող լինել զուտ ազգային: Գիտության զարգացման մեջ կան ազգային շահեր, և ամեն մի կոնկրետ ժամանակահատվածում գիտության զարգացման հիմնական ուղղությունների ընտրության դեպքում պետք է հաշվարկվեն այդ շահերը՝ նկատի ունենալով մեր բոլոր ռեսուրսները և հնարավորությունները: Բայց ամենակարևորն այն է, որ մենք կարողանանք շարժվել համաշխարհային գիտության զարգացման մակարդակին համընթաց:

Սա մեր կարևորագույն գերխնդիրն է:

Չեմ կարող ասել, որ մեզ հաջողվում է գործնականորեն շատ հարցեր լուծել մեր գիտնականների աշխատանքներն ապահովելու համար, բայց ես լավատես եմ և համոզված եմ, որ մենք միացյալ ջանքերով որոշ չափով կհաղթահարենք այն դժվարությունները, որոնք ծառացած են ՀՀ ԳԱԱ առջև:

Թերևս հարկ չկա իմ կողմից մանրամասն նշել մեր գիտական ձեռքբերումների մասին, քանի որ հաշվետվության մեջ զետեղված են նյութեր, որոնք վկայում են, որ ԳԱԱ-ի ինստիտուտները շարունակել են հետազոտությունները գիտության տարբեր բնագավառներում, ձգտելով պահպանել գիտական ուսումնասիրությունների միջազգային մակարդակը և հիմնականում իրականացրել են այդ խնդիրը: Այդ մասին զեկուցվել են բաժանմունքների ընդհանուր ժողովներում և քննարկվել են գիտնականների կողմից: Այդ մասին են վկայում նաև Հայաստանում «2000 թ.» հիմնախնդրի բարեհաջող լուծումը և մի շարք այլ կարևորագույն խնդիրների ուղղությամբ ընտացված արդյունքները, որոնք ներկայացված են ՀՀ կառավարության քննարկմանը: Կասկած չկա, որ եթե շահագործվի արդյունաբերական ներուժի համալիրը և սահմանվեն արտադրական համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, ԳԱԱ-ն կնպաստի մրցունակ արտադրանքի ստեղծմանը և հանրապետության առաջընթացին:

Թույլ տվեք ձեր ուշադրությունը հրավիրել նաև մեզ բոլորիս հուզող մի հարցի վրա ևս:

Ինչպիսի սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունների էլ ենթարկվի Հայաստանը, ինչպիսի իրավիճակում էլ հայտնվի մեր ժողովուրդը, որպես ազգային խոր ցավ նրա հիշողությունը ճնշում է Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը, որի 85-ամյա տարելիցը լրանում է այս տարի: Ժողովի մասնակիցներին ցանկանում եմ տեղյակ պահել, որ ապրիլի երկրորդ կեսին ՀՀ ԳԱԱ-ն անցկացնելու է գիտական լայն նստաշրջան, նվիրված այդ տարելիցին: Ցավոք, ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով հնարավոր չեղավ այդ միջոցառմանը տալ միջազգային բնույթ, բայց մեր բոլորի ակտիվ մասնակցությունը կբարձրացնի միջոցառման դերը:

Ժողովրդի ճակատագրի նկատմամբ խոր մտահոգությամբ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարձնելու համար հրապարակում են նաև ոչ ճշմարիտ, հակասարտմական, մեր ազգային շահերը անտեսող, հակագիտական և վնասակար միտումներ հետապնդող նյութեր: Թող որ դրանք լինեն անհեթեթ ու զառանցական, սխալ և անտրամաբանական, ցավ չէ, միայն թե կարդացվեն, միայն թե «շշմեցնեն» ընթերցողին: Այդ հրապարակումների հեղինակ նորահայտ «լեզվաբանները», «պատմաբանները», «քաղաքագետները» «իրենց հարկի» խմբագրում ու վերաձևում են մեր պատմությունը, վերանայում մեր լեզվի ճշմարիտ զարգացումը, քաղաքական նոր կողմնորոշումներ պարտադրում մեր ժողովրդին և ավերածություններ գործում մեր գիտության և մշակույթի անդաստանում: Մենք չգիտենք՝ ո՞ւմ պատվերն են կատարում այդ հեղինակները, գլուխները քարը, չենք էլ ուզում իմանալ: Սակայն անպայման կուզեինք հասկանալ հիշյալ թերթերի ու նրանց խմբագիրների նման պահվածքի գաղտնիքը, ի՞նչ նպատակներ են հետապնդում՝ տպագրելով բացահայտորեն ազգավնաս նյութեր: Լավ, ասեք, փոխում ենք հայերենի ուղղագրությունը և ազգովի դառնում անգրագետ: Կամ, ասենք, հրաժարվում ենք ռուսական կողմնորոշումից և Ռուսաստանի դաշնակցությունից: Բա հետո՞, այսպես ո՞ւր կհասնենք մենք, «մամուլի ազատության» պարոնայք ջատագովներ: Իսկ ինչո՞ւ է լռում տեղեկատվության և գրահրատարակչության վարչությունը: Թե՞ ինքը Հայաստանի կառավարության ստորաբաժանում չէ և կոչված չէ ծառայելու մեր ազգային շահերին: Եվ ինչո՞ւ են լռում ակադեմիայի համապատասխան ինստիտուտներն ու գիտնականները և արժանի հակահարված չեն տալիս ամեն տեսակ բախտախնդիրներին:

Օրերս էլ մեզ մի «շշմեցնող» անակնկալ մատուցեց «Գոլոս Արմենիի» թերթը՝ տպագրելով միայն որոշ խմբագրություններ ի ծանոթ մի դոկտորի անչափ հավակնոտ հոդվածը՝ գիտությունների ազգային ակադեմիայի և նրա պրեզիդենտի դեմ: Ելնելով նյութի ձևավորումից, որոշ հատվածների ակընթնայտ ընդգծումից և ավելացրած խորագրերից, պետք է չտարակուսել, որ խմբագրությունը ամբողջովին համաձայն է հեղինակի հետ և անթաքույց հրճվանքով է հրապարակել սույն բանսարկային հորինվածքը: Վերջին ժամանակների մեր իրականության արատավոր երևույթներից մեկն էլ դարձել է այն, որ ով ասես, ում հրաժարականն ուզես պահանջում է: Եվ անչափ ցավալի է, որ ճշմարտախոսի և ընդդիմադիր լուրջ համարում ունեցող «Գոլոսը» դարձել է զրպարտագրի համահեղինակ և դրանով իսկ ջուր լցրել շատ հոչակավոր «ռեֆորմատոր» Բագրատյանի և հիշյալ այլ լիդերների ջրաղացին, որոնք գտնում էին, որ գիտությունն ու ակադեմիան ավելորդ շռայլություն են Հայաստանի համար և ջանք չընխայեցին այդ համակարգը կործանելու համար: Հակայական ջանքեր էին պետք ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին՝ պահպանելու ու փրկելու մեր ազգային ակադեմիան, որը իր ներուժով, ակադեմիկոսներով և գիտնականներով այսօր էլ կարող է պատիվ բերել ուզածդ երկրի ու ժողովրդի: Ի դեպ, ՀՀ ԳԱԱ 100 ակադեմիկոս միասին վերցրած ամսական վարձատրվում է այնքան, որքան առաջատար երկրի մեկ շարքային պրոֆեսոր:

Ապրիլի 4-ին և 5-ին ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը շարունակեց իր աշխատանքը:

Ժողովը ընտրեց փոխպրեզիդենտ— բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղար ներ և ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար:

Փոխպրեզիդենտ, բնական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց Էմիլ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ, փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների ակադեմիկոս-քարտուղար՝ Գեորգ ԲՐՈՒՏՅԱՆԸ, փոխպրեզիդենտ, ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար՝ Ցուրի ՇՈՒՔՈՒՐՅԱՆԸ և փոխպրեզիդենտ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար՝ Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ:

Ժողովը ընտրեց ՀՀ ԳԱԱ նախագահություն, հետևյալ կազմով՝ Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ, Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Գեորգ ԲՐՈՒՏՅԱՆ, Էմիլ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ- Ցուրի ՇՈՒՔՈՒՐՅԱՆ, Լենսեր ԱՂԱԼՈՎՅԱՆ, Գեորգ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Գալուստ ԳԱԼՈՅԱՆ, Արամ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Սերգեյ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վանիկ ԶԱՔԱՐՅԱՆ, Վիոլետ ՀԱԿՈԲՅԱՆ, Սերգեյ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆ, Աղոլֆ ՄԱՆԹԱՇՅԱՆ, Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ալպիկ ՄԿՐՏՉՅԱՆ, Ցուրի ՍԱՐԳՍՅԱՆ և Վիկտոր ՖԱՆԱՐՋՅԱՆ:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքը:

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՉԱՊՐԵԻՆՔ ՈՒ ՉՏԵՍՆԵԻՆՔ...

ԵԼՈՒՅԹ ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

Տարիներ առաջ ծերացած Ավետիք Իսահակյանը ասել է՝ «Ապրեի՝ Անին ազատագրված տեսնեի, մեռնեի՝ Սևանը ցամաքած չտեսնեի»:

Այսօր բոլոր նրանք, որոնք կյանքի երկար ճանապարհ են անցել, թե ցերեկվա այթնության, թե գիշերային անքնության մեջ, տխուր մտորում են.

Չապրեինք ու չտեսնեինք մեր Հայաստանը այսպես քարուքանդված, մեր հոգևոր կյանքը՝ այսպես աղճատված, մեր ժողովրդին՝ այսպես թավալեկ ու ձեռքը օտարին պարզած, մեր արժանապատվությունը՝ այսպես ոտնահարված: Չտեսնեինք, ինչպես Բյուրական, արագացուցիչ, մաթեմատիկայի ազգային դպրոց ունեցող, հիմնարար գիտությունների, հայագիտության ամրոց հանդիսացող՝ հայկական ակադեմիան, այսօր միայն ու միայն սնանկ պետության մեղքով, հայտնվել է աղքատ ազգականի դերում և նրա նախագահ հարգելի Ֆադեյ Սարգսյանը՝ կառավարության դռները ծեծելով, հաճախ սեփական պատիվը նսեմացնելու գնով միջոցներ է հայթայթում ակադեմիան ու նրա բազմաթիվ կառույցները աշխատանքային կշռույթի մեջ պահելու, ամեն կերպ նրա նորմալ շնչառությունը ապահովելու համար:

Չապրեինք ու չտեսնեինք մեր մշակույթը՝ այսպես արհամարված, մեծաբերան փողատերերի բարեհաճությանը թողած, մեր թատրոնները, օպերան, կինոն՝ այսքան ետին կարգերը մղված: Չտեսնեինք, ինչպես տարեցտարի, օրեցօր փոխվում է մեր երկրի պատկերը, պատվում կոգինոներով, խաղատներով-գիշերային զվարճավայրերով, ինչպես ազգային կոչվող հեռուստատեսությունը՝ գլխավորվելով խորապես ապազգային և սակայն ազգապետի հովանավորությունը վայելող, գոռոզ ու ինքնապաստան անձնավորության՝ Տիգրան Նաղդալյանի կողմից, շարունակում է կապույտ էկրանը ողողել սև տեսանյութերով՝ դաժանության ու կանացի՝ Մադոնայի հետ մրցող մերկությունների ցուցադրմամբ, գետին ու հոգի վայրենորեն դոփող-տրորող պոպ ու ռեպ երաժշտությամբ: Չտեսնեինք, թե ինչպես այս տարիներին մեր էկրաններին ու համերգասրահներում շարունակաբար ետնամուտ են մղվում Կոմիտասը, երգի-պարի և աշուղական անսամբլները, հայաշունչ երգիչները, հայ պոեզիան, հայրենասիրությունն ու ազգային հպարտությունն ներարկող ցուցադրումները: Թե ինչպես ոգեզրկվում է մեր դպրոցը, հրապարակ են գալիս հայոց լեզվի բլեյանածին դասագրքեր, նորից արհամարհվում, օտարաբանություններով ու գոռեկաբանություններով աղտոտվում է մեր լեզուն: Ազգային ժողովի պատգամավորների և պետական պաշտոնյաների շուրթերին, անշնաշ բացառությամբ, մեր ոսկեղենիկ հայերենը դառնում է «ուտիլ սիրյո», հում, անմշակ: «Ա» օձանդակ բալը ամենուր ստանում է քաղաքացիական իրավունք, ամենուր հնչում է գավառական անկիրթ առոգանությունը: Երկրով մեկ հաղթականորեն քայլում է Ամերիկան, գովազդվում է Ամերիկայի ոգին, թափանցում մեր վարքուբարքի մեջ, խարխլում է մեր բարոյականության հիմքերը՝ դոլարի գայթակղիչ սալիկներով կանանչապատելով մեր հողը, մեր ինքնությունը, մեր աղջիկների կուսությունը, զրկելով մեզ մեր հոգեկանությունից, «ղալամ ու գիր» փրելու մեր տոհմիկ հատկությունից, հոգուց, ոգուց, տեսիլքից՝ կրկնապես իջեցնելով մեզնից Արարատը:

Չապրեինք ու չտեսնեինք, թե ինչպես դատարկվում է մեր Հայաստանը, ու մեր ժողովուրդը, որին մենք՝ անհամար զրկանքների գնով, կաթիլ-կաթիլ ժողվել, երեք ու կես միլիոն էինք դարձրել, հիմա՝ փականները բացված Սևանի ջրերի պես հոսում-գնում է դեպի աշխարհի բացերը ոչ միայն հաց ու աշխատանք որոնելու, գնում է՝ հիասթափված հայրենիքից, նրա առաջնորդներից, նրանում տիրող կեղծիքից ու անարդարություններից: Թուրքի երազն է, որ կատարվում է: Պարպվում է Հայաստանը՝ հայերից, բանից դուրս է գալիս, իրենց իսկ՝ ռեֆորմատոր կոչվող ղեկավարների ծրագրով: Մետաքսի պես սահում, առանց վնճ ու պատերազմի, բացվում է երևանեղի «մետաքսի ճանապարհը», միայն թե ոչ դեպի Եվրոպա, այլ դեպի Թուրանական հյուսիս, դեպի Ադրբեջան ու Միջին Ասիա:

Չապրեինք ու չտեսնեինք 99 թվականի հոկտեմբերի 27-ը և 2000 թվականի մարտի 22-ը, որոնք արդյունք են հենց այս նույն երևույթի՝ բարոյազրկման, ոգեթափության, հայությունից, ասել է՝ թե մարդկայնությունից պարպվելու երևույթի: Չտեսնեինք, թե ինչպես 88 թվականին «միացո՛ւմ, միացո՛ւմ» վանկարկող, միաձույլ ու միակամ մեր ժողովուրդը այսօր մասնատվել, բաժան-բաժան է եղել պաշտոն ակնկալող կուսակցությունների միջև, սոցիալական բևեռացումների՝ դասական ձևակերպումով՝ «պալատների ու հյուղակների» միջև, հենց իր՝ նախկին նախագահի ու նրա գաղափարակիցների սադրիչ հայտարարությունների հետևվանքով դարձել է իրար մեղադրող, իրարամերժ հայաստանցիներ, ղարաբաղցիներ, արարատցիներ, երևանցիներ, գյումրեցիներ, զանգեզուրցիներ: Դարձել է իրար վրա կրակ բացող մաֆիաներ ու կլաններ: Այն էլ ալնպիսի մի պահի, երբ չարախիզ թշնամին՝ սահմանին կանգնած՝ սպասում է նման խառնակ մի իրադրության: Էլ ո՞ր մնաց մեր հայաստանցիներիս ու ղարաբաղցիներիս՝ վտանգի ժամին ի մի գալու, զգաստանալու իմաստությունը: Ի՞նչ պատասխան պիտի տանք մենք հայրենի հողի համար ընկած ու հիմա Ղարաբաղում, Հայաստանի սահմաններին, Եռաբլուրում հանգչող մեր հազարավոր նահատակ զավակներին, Մոնթե Մելքոնյանին, Լեոնիդ Աղգալդյանին, Սամվել Շահմուրադյանին:

Չապրեինք ու չտեսնեինք, թե ինչպես հայոց անկախ պետականությունը՝ փոխանակ հետզհետե ամրանալու, իմաստնանալու, փոխանակ՝ բերմուդյան եռանկյունու մեջ ընկած մեր նավը ափ հանող առաջնորդներ ընտրելու, եղածների մեջ՝ ամենախելամիտներին, ամենապրոֆեսիոնալներին հրապարակ բերելու, նավակայմին կանգնեցրել ենք հանկարծորեն այդ բախտին արժանացած, անփորձ ու անկարող նավապետներ: Թե ինչպես աշխարհին Միկոյան, Մյասնիկյան, Դեմիրճյան և ապա ծովակալ Իսակով և մարշալ Բաղրամյան տվող ժողովուրդը, այսօր հանձնվել է, գուցե և ռազմական վնասակ ունեցող, բայց հանձիվ գիտաճանաչ գեներալների թելադրանքներին, և այս բարդ, տնտեսական զարգացման համաշխարհային ընդգրկումներ և կոմպյուտերային իմացություններ պահանջվող դարում մենք կյանքի ենք կոչել արաբական էմիրաթներին պատջանող ավանդույթներ, ըստ հին, ջեյխի մահից հետո թագավորելի անցնում է որդուն, եղբորը, ազգականին, անկախ նրանից, թե այդ եղբայրը որքան էլ ազնիվ և ուղղամիտ, կարո՞ղ է ու պատրաստվա՞ծ է երկիր կառավարել...

Այո, չապրեինք ու չտեսնեինք... Սակայն, դժբախտաբար, ապրում ենք և ցավն էլ այն է, որ գիտակցելով հանդերձ, թե ձայնդ բարձրացնելով ոչինչ չես փոխի, որ հիմա հարցեր լուծողը երկու տեսակի փողերն են՝ մեկը՝ դրամը, դոլարը, մյուսը՝ ավտոմատի կամ ատրճանակի փողը, միևնույն է, չես կարող լռել, ավելին՝ պարտավո՛ր ես չլռել...

Հենց այդպես էլ կոչվում է օրերս լույս տեսած իմ նոր հրապարակախոսական ժողովածուն՝ «Չեմ կարող լռել», որտեղ ամփոփված են վերջին տարիներին գրած հոդվածներս: Կարծում էի, որ այս գրքով ես սպառել եմ իմ ասելիքը նախկին իշխանությունների մասին: Սակայն անհանգիստ շաբաթ բացվեց մի նոր հրեշավոր հանցագործություն, թերևս ամենահրեշավորը անցյալ բոլոր հանցագործությունների մեջ: Դա այսպես կոչված «էներգետիկ տեռորն» էր: Չնայած վերջին երկու տարում անընդհատ պտտվող լուրերին, ես դրան չէի հավատում. ունկերս, միտքս, էությունս համառորեն դիմադրում էին հավատալու: Ամբողջ 2—3 և ավելի տարիներ հարազատ ժողովրդին թողնել ցրտի ու մթության մեջ տառապելիս, նորածիններին, ծերուկներին՝ սառչելիս, առանց այն էլ կիսաքաղց ընտանիքներին՝ անգործությունից պատեպատ խրփվելիս, ի՞նչ է, թե իրենք շահո՞ւյթ ստանան: Անուն չունեցող մի ոճրագործություն է սա, որին կարող են ընդունակ լինել միայն պաթոլոգիկ սադիստները, դաժանության մոլագարությամբ բռնված մանյակները: Եվ մտածել, որ դա արել են մեր արյունակիցները, մեր նախագահներն ու նախարարները, որոնք անընդհատ խոսել են ժողովրդավարությունից, մարդասիրությունից, մարդու իրավունքներից, և որոնց լսել ենք, ծափահարել, հավատացել: Խեղճ դատավորներ, այս էլ քանի տարի նստել ու դատում են ընդամենը մի քանի մարդ ըսպանողներին: Առավել հանցավորները ճաղերից այս կողմ են, որոնք ազգանվանքներ են, ժողովրդասպանքներ և որոնց նկատմամբ այնքան փափկորեն վարվեց՝ թվում էր թե ղարաբաղյան կռիվներում արդարորեն կարծրացած մեր նոր նախագահը՝ սպարոն Ռոբերտ Քոչարյանը: Նախագահը որքան կարելի է մեղմացրեց իր ստեղծած քաղաքական խորհրդի՝ ՀՀԾ-ական անցյալին տված քաղաքական գնահատականը և ապա իր նախորդին հատկացրեց բարձրագույն ոռճիկ: Իսկ վերջերս էլ Թամանյանի սուրբ ձեռքերով ու արդար գործավարների քննիչներով կառուցած առանձնատունը:

Այդ պատճառով չէ՞ր, արդյոք, որ հնարավոր դարձավ, որպեսզի ամենապատասխանատու գաղափարական ասպարեզը՝ լրատվական և հրատարակչական գործը, տնօրինի երդվյալ ՀՀԾ-ական, ՀՀԾ-ականության իդեոլոգ «Հայք» թերթի խմբագիր Տիգրան Հակոբյանը: Այդ պատճառով չէ՞ր, արդյոք, որ հիմա իրենց ցուցադրականորեն հանդուգն են պահում այդ անցյալ-անկատար գործիչները, որոնք փոխանակ ներումն հայցելու ժողովրդից, դեռ երես ունեն նայելու քաղցից նվաղող մարդկանց աչքերին և ցինիկորեն ներկա ղեկավարությանը վերագրելու երկրի անելանելի վիճակը, որի հիմքը դրեցին իրենք՝ իրենց ապիկար գործունեությամբ:

Իր հորդառատ ասուլիսներից մեկում էքսվարչապետ Հրանտ Բագրատյանը անցնում է սպառնալիքի. «Եթե այս հարցերը անհրաժեշտ լուծում չստանան, բացառված չէ, որ Հարաստանի եթե ոչ հերթական, ապա հաջորդ նախագահը կկոչվի Սուլեյման Դեմիրել կամ Հեյդար Ալիև»: ...Պարզաբանենք խնդիրը. եթե հարցերը այնպես պիտի լուծվեն, ինչպես դուք լուծեցիք, ձեր վարչապետության տարիներին, եթե Հայաստանը վերածվի անշունչ, ապազգային, օտարերկրյա ինվեստատորների ու զրոսաշրջիկների ոտքի տակ ընկած զուտ «սպառողական» տարածքի, ապա միևնույն չէ՞, թե ո՞վ կլինի այդ տարածքի նախագահը՝ Սուլեյման Դեմիրելը, թե Հրանտ Բագրատյանը:

Հարցի մեջ առավել պարզությամբ է մտցնում նախկին գործիչներից մեկը՝ Արմեն Եղիազարյանը, որը հիմա էլ ասպարեզում է և ներկա վարչապետի խորհրդականը: «Գլոբալիզացիայի» սույն տեսությունը, խոսելով Հայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսության մեջ անհապաղ ինտեգրացնելու մասին, ասում է. «Դա նշանակում է, որ մարդիկ պետք է ապրեն այնտեղ, որտեղ ուզում են կամ կարող են» ...Ահա թե ի՞նչ գաղափարական ակունքներից են սնվել մեր պետականությունը «հիմնադիր հայրերը»: Իսկ մենք, միամիտներս, բողոքում էինք, որ պետությունը չի կասեցնում արտագաղթը... Սակայն հետևենք Արմեն Եղիազարյանի մտքերի ընթացքին. «Ի՞նչ ենք կորցնում ինտեգրացիայից: Կորցնում ենք մեր իլյուզիաները: Սա, իրոք, պետք է կորցնել»: Դժվար չէ կռահել, որ սույն խոսքերի հեղինակը «իլյուզիա» ասելով, նկատի ունի հայրենասիրության, հայկականության պահպանումը, ազգահավաք, հայ դատ, պահանջատիրություն և ուրիշ սրբություններ:

Ուզում ես հարցնել, գիտե՞ր, արդյոք վաղամեռիկ Վազգեն Սարգսյանը այս խորհրդականի հայացքների մասին: Եթե գիտեր ու հանդուրժում էր, ապա էլ ինչո՞ւ էր ձգտում հայկական բանակ ստեղծել, մահապարտների ջոկատ կազմել, ինչո՞ւ էր այդպես սրտստուչ երգում հայրենասիրական երգեր, տխրում արտագաղթի համար, եթե ըստ սույն խորհրդականի «մարդիկ պետք է ապրեն այնտեղ, որտեղ ուզում են»:

Ո՛չ, այդպես չէր մտածում Վազգեն Սարգսյանը և զոհ գնաց, որովհետև ներքնապես դեմ էր այդպես մտածողներին, որովհետև, թեկուզ ուշացումով, զգաց, որ հայրենիքը կործանման եզրին է և պետք է ամեն գնով փրկել հայրենիքը, փրկել ժողովրդին: Եվ թող չտխրեն պարոն Եղիազարյանը և իր գաղափարակիցները, եթե ասեմ, որ մեր ներաշխարհը, մեր լիմելիության կերպը ունեցող ժողովրդին, նրա տընտեսությունը, այո՛, նրա տընտեսությունը կփրկեն ոչ այնքան «տրանսնացիոնալ» միջոցառումները, որքան այդ «իլյուզիաները»:

Ուզում եմ խոսքս ավարտել մենախոսությամբ, որ ունեցավ հայտնի բարերար Վահագն Հովնանյանը ուղիղ մի ամիս առաջ, երբ միասին գտնվում էինք Երուսաղեմում: Վիճելով զրույցին ներկա մի քանի ըսփյուռքահայ մեծահարուստների հետ, նա հոգված վրա բերեց. «Այո՛, կհասկնամ, հուսախաբ եք Հայաստանեն, հոն տեղի բարձրաստիճան մարդիկ ձեզի խաբած են, ձեր ձեռնարկումները խափանած են. կըսե՞ք բան ալ դուրս չի գա Հայաստանեն: Մենք ալ մեր տունին մեջ եղբայրներով կըվիճինք անդադար: Անոնք ալ երբեմն ձեզի պես կմտածեն: Ես անոնց կսեմ՝ շատ աղեկ, խաչ քաշենք Հայաստանին վրա, դադրեցնենք մեր շինությունները, մեր տված օգնությունները: Անկե ետքը ինչ պիտի ընենք... Նստենք Նյու Յորքի մեր օֆիսներուն մեջ, առտվնեն մինչև իրիկուն աշխատինք, մեր դոլարները ավելցնենք, հետո՞... ինչպես պիտի անպրենք առանց Հայաստանի, առանց անոնի ցավերուն և ուրախություններուն մասնակից ըլլալու... առանց Էջմիածնին, Գեղարդին, Արարատին կարոտնալու...»:

Ահա այսպես է հայը, պարոն Եղիազարյան: Նրան չես ոգևորի գլոբալիզացիայով, ինտեգրացիայով, նրան չես դրդի գործ սկսել այն Հայաստանում, որը, «տրանսնացիոնալ» միավոր է միայն, եթե այն շնչավորված չէ «իլյուզիաներով»՝ երազանքով, տեսլականությամբ, ազգային գաղափարներով, եթե այն հայրենիք չէ: Ուրեմն աշխատենք գտնել տնտեսությունը զարգացնելու մի ուրիշ մոդել, ժամանակակից տերմինով ասած՝ մեր մենտալիտետին համապատասխանող մոդել և ոչ թե, ինչպես դուք եք ասում՝ «հաղթենք հայի հոգեբանությունը», որը որակում եք «կործանարար»: Առանց այդ սեփական մոդելի, ոչ մի տնտեսություն առաջ չի գնա, ոչ մի ինտեգրացիա գլուխ չի գա: Աշխատենք նախ և առաջ վերականգնել այդ «իլյուզիաներին» նորոգիչ ուժը, որը անխնայորեն փշրել-փշրտել են այս տասը տարիների ընթացքում: Վերականգնենք ժողովրդի ոգին, իսկ դա վերականգնելու համար մեզ հպարտություններ են պետք, նոր Արամ Խաչատրյաններ ու Վիկտոր Համբարձումյաններ են պետք: Մտավորականության վարկը բարձրացնել է պետք: Մեր ստեղծագործ ներուժությունը գործի դնել է պետք:

Ուրեմն անցյալ ու ներկա ղեկավարնե՞ր ու փոխղեկավարնե՞ր, մի՛ շարունակեք ձեր ուշադրության դաշտից դուրս պահել գիտությունը, արվեստը, գրականությունը, կրթությունը: Գուրգուրացեք մեր գիտական և ստեղծագործական օջախների, մեր ստեղծագործ մարդկանց վրա, մեր ազգային արժեքների վրա: 30 միլիոն դոլարով, ավելի ճիշտ՝ 30 արծաթով մի՛ հանձնեք մեր կոնյակագործության հարյուրամյա ամրոցի բանալիները օտար մրցակիցներին: Մի՛ ծախեք Երևանի պատմության թանգարանը բանկիրներին, մի՛ փակեք գրադարանները, Անհարկի նորամուծություններով մի՛ խարխլեք մեր դպրոցը, Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի բակը մի՛ դարձրեք բախկալանոց: Մի՛ քանդեք հանրապետության հրապարակի հայ հինավուրց քարաձգործների ձեռքերի հետքը կրող, նախշաքանդակ պատվանդանը, մի՛ թողեք, որ անտերությունից ավերվի Սուքիասյանի թատրոնի հոյակապ շենքը, անփութորեն փողոց մի՛ շպրտեք օպերային բեմադրության անզուգական վարպետ, «Ողիկտոսի» պես բարդ, մոնումենտալ օպերան հրաշալիորեն իրականացնող Տիգրան Ալոնյանին, թույլ մի՛ տվեք, որ մի քանի անպատկառ լրագրողներ այդպես անզգամորեն վիրավորեն մեր մեծանուն Գոհար Գասպարյանին, մեր հարգարժան մարդկանց:

Վերցրե՛ք ձեր խնամակալ ձեռքի տակ գիտությունը, արվեստը, գրականությունը, դրպրոցը: Դրանք մեր իլյուզիաները սնող ու պահպանող ակունքներն են ու ներշնչարանը:

Իսկ առանց իլյուզիաների՝ առանց երազանքների, առանց ոգեղեն վերացումների, առանց Արարատին հասնելու սրբազան կարոտի, առանց ոգու և հոգու հայ ժողովուրդ չկա, Հայաստան չկա...

Լենսեր Աղալովյանը՝ 60 տարեկան

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը ընդլայնված նիստը նվիրված էր ակադեմիկոս, ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լենսեր Աղալովյանի ծննդյան 60-ամյակին:

Բացելով նիստը և շնորհավորելով հոբելյարին, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը ներկայացրեց Լենսեր Աղալովյան-գիտնականի, գիտության հմուտ կազմակերպչի, մարդու և քաղաքացու ճշմարիտ արժանիքները, հայրենական գիտությանը բերած նրա անուրանալի վաստակը:

Լենսեր Աղալովյանին ողջունեցին և շնորհավորեցին ակադեմիկոսներ Ռ. Մարտիրոսյանը, Վ. Սարգսյանը, Գ. Բաղդասարյանը, ճարտարապետաշինարարական ինստիտուտի ռեկտոր Ա. Բեգլարյանը, Վ. Տոնոյանը (ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ), Արցախի համալսարանի պրոռեկտոր Գ. Նալբանդյանը, Ազգային ժողովի պատգամավոր Ա. Թովմասյանը, Արցախ-Հայաստան հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ Ս. Մելքումյանը, ՍՊԱԾ-ի տնօրեն Ս. Բալասանյանը, Ս. Սարգսյանը (Գյումրիի մանկավարժական ինստիտուտ), Ս. Գևորգյանը (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան) և ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ցու. Ծուբուրյանը:

Ելույթ ունեցողների ջերմ խոսքը ամբողջացրեց Լենսեր Աղալովյանի նկարագիրը՝ հրաշալի մարդ և հայրենասեր, հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ, որ մեծ ավանդ ունի Արցախի ազատագրական պայքարում, քաղաքացիական սկզբունքային դիրքորոշում, որին խորթ է պատեհապաշտությունը, և գիտնական, որն արդեն իր ծանրակշիռ խոսքն է ասել մեխանիկա գիտության բնագավառում:

ՄԵԾԱՐԳՈ ԼԵՆՍԵՐ ԱՐԳԱՐԻ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը ի սրտե ողջունում և շնորհավորում են Ձեզ՝ մեխանիկայի բնագավառի հայտնի գիտնականին և գիտության կազմակերպչին, բազմաբեղուն մանկավարժին ու հասարակական գործչին, ծննդյան 60-ամյակի և գիտամանկավարժական 40-ամյա գործունեության առթիվ:

Դուք առաջինն եք, որ ուսումնասիրել եք անիզոտրոպ սալերում ու թաղանթներում սահմանային շերտի խնդիրները ու հարցերը: Ձեր մի շարք աշխատանքները նվիրված են սալերի և թաղանթների խառը, ոչ դասական խնդիրների դասի ուսումնասիրությանը, որի արդյունքում ստացված լուծումները, մասնավորապես, հնարավորություն են տվել նորովի լուսաբանել առաձգական հիմքի վրա գտնվող հեծանների սալերի և թաղանթների տեսությունը:

Ձեր այն աշխատանքները, որոնք նվիրված են շերտավոր սալերին և թաղանթներին, երբ շերտերի միջև տեղի ունի ոչ լրիվ կոնտակտ, հնարավորություն տվեցին ստանալ կապեր զանգվածային մարմինների սեփական տատանման հաճախությունների և սեյսմիկ ալիքների արագությունների միջև, որոնք կարևոր կիրառություն կարող են ունենալ երկրաշարժի մեխանիկայում: Ձեր «Անիզոտրոպ սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսություն» մենագրությունը կարևոր ներդրում է գիտության մեջ:

Դուք բազմակողմանի գիտական գործունեությունը զուգակցել եք բազմաբեղուն գիտամանկավարժական և գիտակազմակերպչական գործունեությամբ: Երկար տարիներ լինելով ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, Դուք գիտական աշխատողների ուժերը կենտրոնացրել եք մեխանիկայի կարևորագույն պրոբլեմների լուծման և ժողովրդական տնտեսության մեջ նրանց ներդրման վրա:

Ակնառու են Ձեր ծառայությունները մեխանիկայի բնագավառում երիտասարդ գիտնականների պատրաստման շնորհակալ գործում: Ձեր ղեկավարությամբ իրականացվել և հաջողությամբ պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի ատենախոսություններ: Դուք տնտեսական և կիրառական մեխանիկայի գծով Ռուսաստանի Դաշնության ազգային կոմիտեի անդամ եք, երկար տարիներ հանդիսանում եք ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի մեխանիկայի գծով դոկտորական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի նախագահը:

Մեծ է նաև Ձեր հասարակական-քաղաքական գործչի դերը արցախյան շարժման գործում և հանրապետության քաղաքական կյանքում:

Սիրելի և հարգելի Լենսեր Արգարի, մեկ անգամ ևս շնորհավորելով, ամբողջ հոգով ցանկանում ենք Ձեզ և Ձեր ընտանիքին քաջառողջություն, երկար տարիների կյանք և նորանոր ստեղծագործական հաջողություններ՝ ի փառս մեր ժայրենիքի:

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
Յուրի ԾՈՒԲՈՒՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՖՄՏԳ ակադեմիկոս-քարտուղար

Մանվել Զուլալյան, 70 տարեկան

Ակադեմիկոս Մանվել Զուլալյանը 70 տարեկան է: Այդ առիթով ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը և փոխպրեզիդենտ Գ. Բրուտյանը ողջունել են հոբելյարին:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և հումանիտար գիտությունների բաժանմունքը հողում են Ձեզ արտագին ողջույններ և լավագույն բարեմաղթություններ՝ Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ:

Դժվար է գերագնահատել Ձեր ներդրումը հայագիտության ասպարեզում: Ձեր «Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ 16—17-րդ դարերում», «Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ», «Արևմտյան Հայաստանը 16—18-րդ դարերում» հիմնարար աշխատությունները և Ձեր այլ մեծարժեք ուսումնասիրություններ առանցքային նշանակություն ունեն հայ արևելագիտության զարգացման գործում:

Առանձնով է բազմավաստակ գիտնականին ներդաշնորհն միահյուսված Ձեր գիտակազմակերպական ու մանկավարժական եռանդը: Այսօր Ձեզ երախտագիտությամբ է նայում Ձեր երիտասարդ սերնդակիցների այն բանակը, որոնց համար Դուք եղել եք ղեկավար և ուսուցիչ: Բոլորիս է հայտնի այն սրտացավ վերաբերմունքն ու ջերմ հոգատարությունը, որ Դուք ցուցաբերում եք գիտական կադրերի աճի ու դաստիարակության նկատմամբ: Արդյունքն արևելագետների այն մեծ բանակն է, որն այսօր ապահովում է հայ արևելագիտական դպրոցի միջազգային ճանաչումը:

Դուք բոլորիս հիացնում եք ոչ միայն Ձեր ստեղծագործական մտքի արգասավորությամբ, հմուտ գիտամանկավարժական գործունեությամբ: Դուք բոլորի սիրելին եք Ձեր՝ մարդկային լավագույն բնութագծերն իր մեջ կենտրոնացրած խառնվածքով ու բնավորությամբ:

Մեծարգո հոբելյար, այսօր ջերմորեն ողջունելով ու շնորհավորելով Ձեզ, ցանկանում ենք քաջառողջություն, արևշատություն, երկար տարիների կյանք և նորանոր գիտական սխրանքներ՝ հանուն հայագիտության հետագա զարգացման:

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
Գևորգ ԲՐՈՒՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՓԱՅԼՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԸ

Մեր հասարակությանը ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը հայտնի է իբրև խոշոր թատերագետ ու գրականագետ, գիտության կազմակերպիչ, մանկավարժ, փայլուն հրապարակախոս ու արվեստաբան-քննադատ, հայտնի է այս լայն շառավիղով, որ վկայում է նրա ակտիվ խառնվածքի ու անհանգիստ բնավորության մասին:

Մեծ է նրա ավանդը գիտության ասպարեզում: Հատկապես այստեղ է դրսևորվել նրա վառ անհատականությունը, հետազոտական նախասիրությունների, նպատակի հստակ ըմբռնումը, բանականի ու հուզականի սերտ միասնությունը:

Լ. Հախվերդյանի թատերագիտական գործերը հավասարապես հետաքրքրական են և՛ մասնագետների, և՛ լայն ընթերցողի համար: Օժտված լինելով սուր անալիտիկ տրամաբանությամբ, նա վերլուծվող երևույթի մեջ կարողանում է դրսևորել գլխավոր, որոշիչ գծերը, տալ դրան անկողմնակալ գնահատական: Եվ միևնույն ժամանակ, հիմնականը նրա համար թատերական արվեստի կենդանի կյանքն է, այդ արվեստի հետ շփման բերկրանքով ընթերցողին վարակելու ձգտումը: Արվեստի մասին նա կարողանում է գրել արվեստի լեզվով:

Այդպիսին էին արդեն նրա առաջին լուրջ աշխատությունները. «Սուրեն Քոչարյանի արվեստը» (1959) և առանձնապես հայտնի ռեժիսոր Վարդան Ադեմյանին նվիրված մենագրությունը «Կլասիկան և մեր օրերը» (1967): Համարձակ և կրքոտ գրված այդ աշխատանքը հրապուրում է ոչ միայն Վ. Ադեմյանի ներկայացումների նուրբ ու ստույգ վերլուծությամբ, այլև գրականագիտական ընդարձակ համեմատություններով, կապված Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի ստեղծագործությունների հետ:

Պակաս հրապուրիչ չի գրում նա դերասանների մասին: «Հայ սովետական թատրոնի պատմություն» (1967) գրքում նրա գրչին է պատկանում մեր դերասանների (այդ թվում ոչ միայն ամենահայտնի) ստեղծագործական դիմանկարների մի ամբողջ շարք: Ինչպես իրավացիորեն գրել է թատերագետ Հ. Հովհաննիսյանը. «Թատրոնի պատմության մեջ գուցե չկա ավելի հմայիչ ու հետաքրքիր երևույթ, քան այդ պատմության հերոսի՝ դերասանի կերպարն ու ճակատագիրը: Եվ այս գրքում յուրաքանչյուր այդպիսի կերպար ոչ միայն իր տեղն ու իմաստը, այլև իր, միայն իրեն հատուկ հմայքն ունի»:

Լ. Հախվերդյանի «Հայ թատրոնի պատմություն. 1901—1920» մեծածավալ մենագրությունը արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Եվ դա պատահական չէ: Երբևէ հատուկ ուսումնասիրության առարկա չդարձած այս շրջափուլին նվիրված մենագրությունը հատկանշվում է նյութի լայն և բազմակողմանի ընդգրկմամբ, ընտիր լեզվով, գեղագիտական ընդհանրացումներով:

Հախվերդյանի գրականագիտական ամենանշանակալի և վառ գործերից, անշուշտ, «Թումանյանի աշխարհը» (1966) ուսումնասիրությունն է: Դա նոր ու թարմ խոսք էր մեր դասականի մասին: Հեղինակը կարողացավ այստեղ վերակենդանացնել թումանյանական հերոսներին, դարձնել մեզ համար ավելի հասկանալի ու հարազատ, կարողացավ ցույց տալ հանճարեղ բանաստեղծի պոեզիայի ոչ միայն անկրկնելի հմայքը, այլև խորությունը, իսկական դրամատիզմը:

Երջանիկ ճակատագիր ունեցավ նրա «Զրույցներ լեզվի մասին» գիրքը, որն արդեն երեք հրատարակություն է ունեցել (1982, 1986, 1993): Պարզ ոճով, բայց լեզվագիտական ստույգ սկզբունքներով գրված «Զրույցները» շատ շուտ դարձան սեղանի գիրք ուսուցիչների և բոլոր տարիքի մարդկանց համար, ովքեր սիրում են հայոց լեզուն և մտահոգված են նրա ներկա վիճակով: Նույն երջանիկ ճակատագիրն է ունեցել Հախվերդյանի «Պարույրը» խոհագրությունը (Էսսե), իմ կարծիքով լավագույնը, ինչ գրվել է մինչև այսօր Պարույր Սևակի մասին:

Վերջին տասնամյակի մեր հասարակական կյանքը դժվար է պատկերացնել առանց Լևոն Հախվերդյանի կրքոտ ու սուր ելույթների՝ լինի դա մամուլի էջերում, թե ամբիոններից: Շատ հաճախ նրանք կրում են մշակույթի, լեզվի, քաղաքականության հրատապ հարցերի շուրջ բանավեճեր բացողի առաքելություն: Իբրև գիտնական, քննադատ ու հրապարակախոս, նա օժտված է քննարկվող պրոբլեմի բուն էությունը որսալու և հասարակական սևեռուն ուշադրության առարկա դարձնելու բացառիկ կարողությամբ:

Եվ վերջապես Հախվերդյան-տնօրենի մասին: Արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնը նա ստանձնեց 1987 թվականի աշնանը: Շատ շուտով հասան ծանր, դաժան օրեր: Փլվում էր երկիրը, կործանման եզրին կանգնած էին գիտությունը, արվեստը: Եվ հատկապես այդ տարիներին դրսևորվեցին Հախվերդյան-տնօրենի լավագույն գծերը՝ ակտիվ խառնվածքը, համառությունը, կամքը, քաղաքացիական արիությունը, պարտքի բարձր զգացումը: Նա լավ էր հասկանում ,որ ներկա պայմաններում իզուր բան է պնտական ատյաններից որևէ աջակցություն սպասել: Եվ նա չէր սպասում՝ նա գործում էր: Հիմնականում շնորհիվ Լևոն Հախվերդյանի, նրա հեղինակությունի և համառության, Արվեստի ինստիտուտը կարողացավ ոչ միայն պահպանել իր գոյությունը, այլև առաջ գնալ, զարգանալ: Դրա վկայությունը են՝ այս վերջին տարիների ինստիտուտի հրապարակումները (այդ թվում կապիտալ աշխատությունների), հետաքրքիր գիտաժողովները, ինստիտուտի համալրումը երիտասարդ, խստումնալից ուժերով:

Վերջերս ՀՀ ԳԱԱ նախագահությունը շատ ջերմ և հուզիչ մթնոլորտում նշեց Լևոն Հախվերդյանի ծննդյան 75-ամյակը: Իմ կողմից սիրելի հոբելյարին ես կարող եմ ցանկանալ մի բան՝ առողջություն: Մնացածը նրա հետ է և միշտ կմնա՝ բնածին, Աստծուց պարգևված տաղանդը, ուսանելի աշխատասիրությունը, ջերմ ու բարի սիրտը, շրջապատի, ավելին՝ մեր ժողովրդի սերն ու հ

ՀԱՂԱՐԾԻՆՅԱՆ ԿԱԹՍԱ. ԵԶԱԿԻ ՆՄՈՒՇ

Հայտնի է, որ գիտնականների կողմից տասնամյակների հետազոտությունների ընթացքում ի հայտ են բերվել հայ վարպետների ձեռքերով կերտված բրոնզյա, մետաղյա և այլ առարկաների բազմաթիվ հուշարձաններ, որոնք բացառիկ նշանակություն ունեցան հայ բազմադարյան կիրառական արվեստի ուսումնասիրության բնագավառում: Նման հուշարձանների շարքին է դասվում նաև Հաղարծնի վանքում գտնված, գեղարվեստական մետաղի մշակման եզակի օրինակ (1232 թ.)՝ սղնձյա խոշոր կաթսան: Այն ցուցադրված է ՀՀ պատմության թանգարանի սրահներից մեկում և տասնամյակներ շարունակ այցելուների և մասնագետների ուշադրության առարկան է: Առաջինը այդ կաթսայի մասին տեղեկություններ հայ մամուլում հրապարակել է վանքի վանահայր Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը՝ այն գտնելու օրից, 1884 թվականի ապրիլից: «ՆՈՐ ԴԱՐԸ» իր հաղորդման մեջ հայտնում է ոչ միայն կաթսայի գտնելու հանգամանքները, այլև մասնագետների ուշադրությունն է հրավիրում այդ եզակի հուշարձանի վրա:

Հովհաննես Երզնկացի-Պլուզ

Իբրև ոսկի՝ մարգարտով հյուսված,
Ուղղում եմ խոսքս հոգեվարժ նրանց,
Ովքեր տենչում են բանն իմաստության...
Եվ պատմում եմ այն ըստ կարողության՝
Տրված առավել՝ քան արժանի եմ:

1958 թվականի Մատենադարանի ձեռագրերի հիմնադրման առաջին անգամ լույս ընծայվեց տողերիս հեղինակի՝ Հովհաննես Երզնկացի-Պլուզի մասին մենագրությունը՝ հատուկ ուսումնասիրությամբ և չափածոյի գիտահամեմատական բնագրերով: Հետագայում՝ 1986 թ. տպագրվեց միայն չափածոն՝ նոր ստեղծագործությունների համալրումով: 1993 թվականին հրապարակ եկավ 3-րդ գիրքը, նվիրված մեծ մտածողի ծննդյան 750-ամյակին, որ պիտի նշվեր 1993 թ.՝ միջազգային մասշտաբով և որը հետաձգվել էր աննպաստ պայմանների հետևանքով: Ամփոփենք նաև, որ 20-րդ դարի երկրորդ կեսը Երզնկացու համար վերածնունդ դարձավ: 1958 թ. սկսած՝ թե մեզ մոտ, թե արտասահմանում, իրար հաջորդեցին տարբեր մասնագետների մի շարք հետազոտություններ՝ նվիրված հեղինակի փիլիսոփայական, գեղագիտական, երաժշտագիտական, արվեստաբանական, գրականագիտական, բանասիրական, քերականագիտական, լեզվական, մանկավարժական, խրատական հայացքներին ու բազմաբնույթ այլ հարցերի:

Հայ միջնադարյան գրականության և մատենագրության իմացության համար նախ հատկապես կարևոր են՝ Պլուզ և Տորոնացի մականուններով, երկու Հովհ. Երզնկացիների և երկու Կիրակոսների՝ Երզնկացի և Գանձակեցի, ինչպես նաև ԺԳ-ԺԵ դարերում ապրած այլ նշանավոր ու չուսումնասիրված երզնկացի հեղինակների մասին արված հայտնությունները: Այստեղ համառոտակի նշենք մի քանի առանցքային եզրահանգումներ, որոնք ճշտում և նորովի են արժեքավորում հայ միջնադարյան գրականությունն ընդհանրապես:

ա. Հ. Ե. Պլուզը և Հ. Ե. Տորոնացին, որ մինչև այս դարի կեսերը, չնչին բացառությամբ, նույնացվել էին, տարբեր անձիք են. առաջինն ապրել ու գործել է ԺԳ, երկրորդը՝ ԺԳ-ԺԴ դարերում:

բ. Հ. Ե. Պլուզը, որ սըրբության պսակով էր զարդարվել, հայ միջնադարի «գերիմաստ» մեծությունններից է, էնցիկլոպեդիստ, արձակի և չափածոյի բազմաբովանդակ և բազմաժանր հեղինակ:

գ. Նա մեծ տիեզերագետ է՝ այսօրվա չափանիշներով, որ դարեր առաջ կանխել է Եվրոպային, հրավիրվել իր աշխատության մասին խոսելու ոչ միայն Հայաստանում ու Կիլիկիայում, այլև հարևան երկրներում: Իսկ Ատլանտյան ծովի (օվկիանոսի) մասին, որպես եզրակացություն գրել է. «Նրա վրա ոչ նաւ ելանէ» «եւ կենդանի կարէ բնակիլ ի նմա»:

դ. Ժանրային առումով «հայերեն» կոչված և առ այսօր անհեղինակ ու անժամանակ մնացած քառյակները (որոնցից մի քանի նմուշ պահպանվել են Նահապետ Քուչակին (ԺԶ դար) վերագրվող երկերում), Հովհաննես Երզնկացու գործերն են: Դրանք առաջին ապացույցն են այն իրողության, որ այդ ժանրը գոյություն է ունեցել առնվազն ԺԳ դարից սկսած, եթե ոչ ավելի վաղ:

ե. Երզնկացու ապրած ժամանակի, կյանքի ու ստեղծագործության ճշգրտումն ապացուցում է, որ հայ միջնադարի (ԺԱ-ԺԸ դարեր) առաջին նշանավոր բանաստեղծը (այլև բազմաժանր) ո՛չ թե Ֆրիկն է (ԺԳ-ԺԴ դդ.), այլ Հովհ. Երզնկացի Պլուզը:

զ. Ձեռագրական նյութերի մանրակրկիտ հետազոտության հիման վրա վերջնականապես հաստատվում է Կիրակոս Երզնկացու անձնավորությունը, ապրած ժամանակը, կյանքն ու գործը և վերջնականապես սահմանազատվում Կիրակոս Գանձակեցուց, որ գրեթե առ այսօր մնում էր նույնացված Երզնկացու հետ:

է. ԺԳ դարից սկսած, մինչև Տաթևի համալսարանի հռչակի հասնելը (ԺԴ—ԺԵ դդ.), ուր նույնպես կային երզնկացի համբավավոր իմաստասերներ, Երզնկան արդեն հայ մտավորականության բաղձալի կենտրոններից էր՝ «Երկրորդ Երուսաղեմ» և «Նոր Սիոն», «որ կարծես ճիգ մը ուներ մրցելու Կիլիկիո հետ...»: «Երզնկան երկիրներուն ամենագեղեցիկն է», գրել են օտար ճանապարհորդները:

Այստեղ են հետագայում գործում նաև Հովհ. Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին. այստեղ է վերջինս դառնում քահանա և նույն օրն ստանում վարդապետության գավազան: Ի տարբերություն Տաթևի դպրոցի, որ հիմնականում հայտնի էր որպես իմաստասիրության կենտրոն, Երզնկան նշանավոր էր ողջ միջնադարում իր բազմաթիվ գիտնական վարդապետներով, գրողներով ու բանաստեղծներով, որոնցից մեկն էր մեր ամենամեծ բանաստեղծը՝ **Կոստանդին Երզնկացին:** Ուշագրավ է, Երզնկացի էր նաև ԺԳ դարի վերջում Կիլիկիայի կաթողիկոս Ստեփաննոս Հռոմկլայեցին:

Երզնկացի էին նաև Կոլոմբոսի հետ առաջին անգամ Ամերիկա ոտք դրած հայ՝ Մարտիրոս Երզնկացին և թուրք Թալեաթին արժանի վրեժխնդրությամբ մահվան դատապարտած Սողոմոն Թեհլիրյանը:

Երզնկայի տված բազմատեսակ մեծություններ ժառանգարար կան և այսօր, թե՛ գիտության և թե՛ արվեստների բնագավառում, սակայն բավարարվենք նշել գոնե երկուսին, թեև արդեն մահացած. Լևոն Հերայդ Սրապյան՝ «նոր աստղ ամերիկյան երկնակամարում», անգլիագիր նշանավոր բանաստեղծ և փիլիսոփա (Նյու Յորք) (նրա որդին է նշանավոր շաքմեն Ջոն Հերայդ Սրապյանը), և Երզինկյան Լևոնը (նախնիներով երզնկացի), նշանավոր «Նարիեկ» բուժական սննդանյութի գյուտարար, Երևան:

Իբրև ընդհանրացում ավելացնենք, որ Երզնկան և Եկեղյաց գավառը պատմությանը հայտնի են դեռևս Ը դարից՝ մեր թվականությունից առաջ (եթե ոչ ավելի վաղ): Երզնկան «եղել է հայ ժողովրդի կազմավորման օրրանների մեկը», թագավորանիստ քաղաք, հայտնի իր մեծադիր ու գեղանիստ դաշտով, ուր դրված էր Անահիտ աստվածուհու հռչակավոր ոսկեձույլ արձանը և ուր «ազատորեն կնարակէին» նրան նվիրված ցուլերի ու գոմեշների նախիրները: Հետագայում Երզնկան և Սեպուհ լեռը նշանավորվեցին քրիստոնեության մուտքի և Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված, ուր գործել, մահացել ու թաղվել է նա: Հայտնի դարձավ նաև Մեսրոպ Մաշտոցի առաջին սյուակերտ Հովհաննն Եկեղեցանին, որ թե՛ հելենագետ և թե՛ քաջ հայագետ էր և որի հետ Մ. Մաշտոցը կատարեց իր առաջին թարգմանությունները... և այսպես հասնում ենք մինչև ԺԳ դարը... ապա մինչև մեր օրերը...

Արմենուհի Երզնկացի ՍՐԱՊՅԱՆ
Հայ հին գրականության դոկտոր

ՊԱՏԱՆԻՆ՝ ՄԱՔ ՔԻՆԼԻԻ ԳԱԳԱԹԻՆ

Ռեկորդների Գինեսի գրքում գրանցվեց մի նոր էջ. Հյուսիսային Ամերիկայի ամենաբարձր գագաթ բարձրացավ հարավկորեացի 12-ամյա մի պատանի՝ Կիմ Չեն Սիկը: Մինչ այդ ամենաբարձր գագաթի հաղթահարման ռեկորդը պատկանում էր Ջորջիայից Ջոշուա Սյուարտին, որը 1995 թվականին 12 տարեկան և 2 ամսական էր: Մինչդեռ, Կիմը լեռնագագաթին նշեց իր 12-ամյակը: Այդ առիթով ես հիշեցի իմ առաջին հանդիպումը Մաք Քինլիի հետ: Ամուսնու հետ փոքրիկ «Սեսոսնելով» թռել եմ լեռնաշղթայի վրայով: Լեռը իրոք բնության հրաշալիք է: Գագաթի բարձրությունը 6194 մետր է: Պարզ եղանակին լեռնագագաթը երևում է հարյուրավոր մղոն հեռավորությունից և այն, իրոք, իշխում է Ալյասկայի լեռնաշղթայի բոլոր գագաթների վրա: Եվ պատահական չէ, որ Մաք Քինլին համարվում է ԱՄՆ-ի 49-րդ նահանգի խորհրդանիշը:

Լեռն ունի բազմաթիվ բնութագրումներ. ամենացուրտը, ամենադաժան քամիներով հողմահարվածը, ամենադաժան կլիմայական գոտում գտնվող: Շրջապատը ծածկված է փոքրիկ հարթություններ-սառցադաշտերով, որոնք էլ ծառայում են որպես ուղղաթիռների օդակայաններ: Լեռնից դիտելիս ասես այլ մոլորակի վրա ես գտնվում:

Տեղաբնակները և ալպինիստները լեռն անվանում են «Դանալի», որ տեղաբնակ հնդկացիների լեզվով նշանակում է «Մեծ»: Իմ կարծիքով այդ անվանումը ավելի սազական է, քան ամերիկյան պրեզիդենտի անունը, որով 1901 թվականին կոչել են լեռնագագաթը:

Կիմ Չեն Սիկը և նրա հայրը՝ Կիմ Տեյ Ուանգը ալպինիստների յոթ հոգիանոց խմբի անդամ են: Ինչպես պատմում է հայրը, որդին ալպինիզմով սկսել է զբաղվել երեք տարեկան հասակից: Իսկ 8 և 9 տարեկանում նա բարձրացել է շվեյցարական Մատտերխորնի և տանզանյան Կիլիմանջարոյի վրա: Այս վերջին վերելքը հաղթահարում են երեք օրում, իսկ ավելի փորձառու լեռնագնացները այդ գագաթը հաղթահարում են երեք շաբաթում: Իհարկե, Կիմի թիմին մեծապես օգնեց լավ եղանակը, որը հազվագյուտ է այս վայրերում: Երկու շաբաթ առաջ բրիտանացի զինվորական ալպինիստները գագաթը բարձրանալիս ծուղակ էին ընկել և միայն փրկարարները՝ ուղղաթիռների օգնությամբ, կարողացան փրկել ձախողակներին:

Վերջին տարիներին լեռնագագաթը հաղթահարելացանկացողների թիվը հազարից անցնում էր և միայն հինգհարյուրը կարողացան նպատակակետին հասնել: Երեքը զոհվեցին: Ալպինիզմի շրջանը կարճ է՝ ապրիլից հուլիս, քանի որ ապրիլին շատ ուժեղ քամիները անհնարին են դարձնում վերելքը, իսկ հուլիսից հետո գալիս է նոր ձյուն և լեռնագագաթը ծածկվում է փխրուն ձյունով, որն անհնարին է դարձնում վերելքը:

Թեև փոքրիկ Կիմի ռեկորդը բավականին տպավորիչ է, սակայն մասնագետների կարծիքով, պետք է սպորտի նման ձևերի համար սահմանել տարիքային որոշակի սահման, քանզի հայտնի չէ, թե վերնում, լեռներից այն կողմ ինչպիսի անակնկալներ կան թաքնված, որոնց հայտնվելու դեպքում դժվար է պատկերացնել փոքրիկ պատանու վարքագիծն ու մարմնի դիմադրողականությունը: Ահա թե ինչու նման ռեկորդների սիրահարներին միշտ պետք է հեռու պահել պատահարներից ու անակնկալներից: Կամ ապահովել նրանց անվտանգությունը:

Տ. ԼՈՆԳ
«Նովոյե ռուսսկոյե սլովո»
Դալլաս



Ապագայի ճարտարապետություն. հիբավի անսահման հնարավորություն երևակայության համար: Այս ալյումինե գունդը պարզապես օդանավակայան է, որը նախատեսված է Արաբական էմիրություններում կառուցելու համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը հայտարարում է մրցույթ՝ «Աստղերի և միգամածությունների ֆիզիկայի», «Արտագալակտիկական հետազոտությունների», «Տեսական աստղաֆիզիկայի», «Բարձր էներգիաների աստղաֆիզիկայի» գիտահետազոտական բաժինների և «Մաթեմատիկական ֆիզիկայի» կենտրոնի (գիտահետազոտական բաժնի կարգավիճակով) վարիչների թափուր պաշտոնների համար:

Մրցույթին կարող են մասնակցել ֆիզ.-մաթ. գիտությունների գծով գիտական աստիճան ունեցող գիտնականներ: Թեկնածուների հիմնավորված առաջարկությունները (թերթի լույս տեսնելու օրվանից) մեկ ամսվա ընթացքում ներկայացնել հետևյալ հասցեով.

Բյուրականի աստղադիտարան (գիտ. քարտուղարին), 8748488, Արագածոտնի մարզ, գ. Բյուրական: Էլ. հասցե՝ aregm1ckabao.sci.am:

ՆՈՐ ՀԱՅԱՐԱՏՅԱԿ...

Թեև օրաթերթ չենք, բայց մեր ընթերցողները ցանկանում են իրենց նախընտրելի թերթում կարդալ նաև միջազգային կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվություն: Պահանջը իրավացի է, եթե հաշվի առնենք, որ համատարած կարիքը թույլ չի տալիս նաև գիտնականներին ձեռք բերել օրաթերթեր, տպագիր այլևայլ հրատարակություններ:

Ու թեև մենք աշխարհի անցուդարձին անդրադառնում ենք առանձին հետաքրքիր, գիտական և հասարակական արժեք ներկայացնող հրապարակումներով, օրվա, շաբաթվա կարևոր տեղեկատվության հրապարակման կարիքը, իրոք, զգացվում է: Հենց այդ բացը լրացնելու համար 2000 թվականի ընթացքում մենք թերթի ամեն համարում կհրապարակենք անցնող՝ երկրորդ հազարամյակը եզրափակող տարվա միջազգային կարևոր անցուդարձերի մասին տեղեկատվություն: Եվ այսպես՝ «Մոլորակը թևակոխում է նոր հազարամյակ» սկսում ենք հաջորդ համարից:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոնդոնի Բրիտանական թանգարանի բրոնզե այս արձանի լուսանկարը խմբագրությանն է տրամադրել Երևանի 114-րդ դպրոցի աշակերտուհի Մանան Թևոսյանը: Լուսանկարում Անահիտ դիցուհու քանդակն է, որի մասին թանգարանի մակագրությունը այցելուներին պատմում է հետևյալը՝

«Անահիտա՝ Աֆրոդիտեի տիպի բրոնզե քանդակ, գտնված Թուրքիայի հյուսիս-արևելքում՝ Փոքր Հայքում: Հելլենիստական շրջանի արձան— մ.թ.ա. II—I դար».

Անահիտ դիցուհու այս արձանը մեզ համար նորություն չէ, նրա լուսանկարները տպագրված են արվեստի ու պատմության բազմաթիվ գրքերում: Նորությունն ու հաճելին այն է, որ դպրոցականը Բրիտանական թանգարանի հարուստ նմուշների օվկիանոսում փնտրել, գտել և լուսանկարել է մեր դիցուհուն:

ՆՈՐ ՀԱՆԴԵՍ

«ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»

2000 թվականը հայ բժշկությունն ու առողջապահությունը նշանավորեցին հանդեսի անակնկալով. լույս տեսավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և «Էրեբունի» բժշկական կենտրոնի «Էրեբունի-բժշկական լրատու» հանդեսի առաջին համարը:

Դա հիանալի նվեր է առողջապահության բնագավառի բոլոր աշխատողներին, բնական է, առաջին հերթին՝ բժիշկներին: Բուժման նոր մեթոդներ, հայ գիտնականների և բժիշկների նոր հետազոտություններ, փորձի փոխանակում, նաև՝ տեղեկատվություն թե՛ մասնագետների, և թե՛ զանգվածային ընթերցողի համար: Այս է նոր հանդեսի առավելությունը:

Հայ բժիշկները ներկայացնում են իրենց կատարած գիտափորձերն ու բժշկության մեջ ներդրած աշխատանքները: Թոքերի խրոնիկական խցանիչ հիվանդությունների ժամանակ խրոնիկական թոքային սրտի վաղախտորոշման և բուժման հարցի շուրջ իրենց գիտական տեսակետներն են հայտնում բժիշկներ Է. Նազարեթյանը, Մ. Նարիմանյանը, Ա. Գասպարյանը: Քննարկվում են թոքերի խրոնիկական խցանիչ հիվանդությունների հրատապությունը և խրոնիկական թոքային սրտի վաղ ախտորոշմանը վերաբերող հարցեր: Զախ փորոքի ռեմոդելավորման առանձնահատկությունները սրտամկանի սուր ինֆարկտի ժամանակ շաքարային դիաբետով հիվանդների մոտ թեմայով հանդես են եկել Է. Նազարեթյանը, Հ. Միսակյանը, Լ. Աթայանը, Ա. Բաբայանը, Լ. Ղուկասյանը: Հեղինակների հետազոտությունները ցույց են տվել, որ սրտամկանի կառուցվածքային փոփոխությունները սուր ինֆարկտի են հասցնում շաքարային դիաբետով հիվանդներին: «Կարվեդիլոլը սրտաբանական սրակտիկայում» հոդվածում հեղինակները նորագույն հետազոտությունների միջոցով ցույց են տալիս, որ կարվեդիլոլը կարելի է նաև հաջողությամբ կիրառել իշեմիկ և ոչ իշեմիկ ծագման խրոնիկական սրտային անբավարարության ժամանակ: Այս դեղամիջոցը նվազեցնում է մահացության դեպքերը և հոսպիտալացման հանախականությունը:

Հանդեսում մեծ տեղ է հատկացված պարբերական (պերիոդիկ) հիվանդությունների ախտորոշման և բուժման հարցերին: Եվ դա բնական է. պարբերական հիվանդությունը, որ ժողովուրդը հանախ «Երևանյան» է անվանում, մեծ տարածում ունի Հայաստանում և, ցավոք, բուժման տարածված մեթոդները դեռ այնքան էլ արդյունավետ չեն: Ահա թե ինչու հանդեսի հրապարակումները կարող են հետաքրքրել մասնագետներին, թեպետ այդ հրապարակումները անգլերեն են:

Վերջին տարիներին լուրջ նվաճումներ են ձեռք բերվել ստոմատոլոգիական իմպլանտանտների կիրառման գործում: Լապարոսկոպիկ վիրահատությունների հարցին է անդրադառնում Ցու. Հարությունյանը: 20-րդ դարի վիրաբուժության ամենավառ էջերից մեկը էնդոսկոպիկ վիրաբուժության ծագումն ու բուռն զարգացումն է: Առաջին լապարոսկոպիկ խոլիցիստէկտոմայից հետո, որը կատարվել է ֆրանսիացի վիրաբույժ Ֆ. Մուրետի կողմից 1987-ին, էնդոսկոպիկ վիրաբուժությունը մեծ արագությամբ տարածվեց ողջ աշխարհում: 1992 թվականին լապարոսկոպիկ վիրահատություններ սկսվեցին կատարվել նաև «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Կատարվել է 1165 լապարոսկոպիկ վիրահատություն:

Առաջին անգամ Հայաստանում 1996—1998 թթ. ընկած ժամանակահատվածում ռեմատոիտ պոլիարթրիտով, զույգ ծնկան և կոնքազդրային հոդերի անկիլոզով տառապող 46-ամյա կնոջը կատարեցին նշված հոդերի էտապային տոտալ էնդոպրոթեզավորում: Վիրահատություններն անցել են առանց բարդությունների: Վիրահատությունից անցել է երկու տարի և ապահովված են այդ կնոջ ակտիվ կյանքն ու գործունեությունը: Այս տիպի վիրահատությունների խնդիրն առավել արդյունավետ լուծելու համար Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ առաջարկվում է ոչ անկողնային հիվանդների հետաազոտման կարգ:

Ամփոփագիրը ներկայացնում է «Էրեբունի» բժշկական կենտրոնի կոլեկտիվի տքնաջան աշխատանքը, որը կարող է օգտակար լինել ինչպես գիտնականներին, այնպես էլ բժշկության բնագավառ նոր մուտք գործած երիտասարդ բժիշկներին:

Բարի երթ մաղթենք նոր հանդեսին:

Հակոբ ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ. հեռախոս՝ 56-80-14:

«Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 12.04.2000 թ. (3434—3471):

«ГИТУТЮН» («Наука») — газета НАН РА